



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1501

Zugspitze Nussbaugasse

Lichtung u. Gipsung

83

7 47

Ursprung
1892

2011

Տերմաքե Տեմաուրյա.

ՀԱՅԵՐԻԽ ՊԵՏԱՍԿԱՅԵՆ.

ԴԵՄԻՄ ԵՍԵՆԱԴՈՒՄ

Տերմաքա և Տումարձ.

ԼԻՆԶԱՐԴ ԵՒ ԳԵՐՏՐՈՒԴ

ԱՄՆԱԲԵՐԴ

ԵՐ

ՓԻՆԴ. ՕՄՄԱՆԵՐ ԿՐԴ
Մեդաուրեյկոյ Տեմաուրյա
ԱՐՏԱՏՊՈՒՄ

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՑ»

Մոսկվա
Մուսթ. Բարադոբովա

ՄՈՍԿՈՒՄ

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆԻ.

1892

(52)



182003

83
7-47

uy

ՀԱՅԵՐԵՆԻ ՊԵՏԱԿԱՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԼԻՆՅԱՐԴ ԵՒ ԳԵՐՏՐՈՒԴ


ԱՐՏԱՏՊՈՒԾ

ՀԱՅԵՐԵՆԻ ՊԵՏԱԿԱՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴՐԱՂԱՐԱՆԻՑ»

1698

8



1892
14

ՄՈՍԿՈՒՍ

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՌԴԱՐԵԱՆԻ

1892

(52)

188012204P 01090592

ju

ԴՈՂՁՆԻՐ ԵՎ ԲՆԱԴՆԻՐ

Дозволено цензурою. С.-Петербургъ, 2 Октября 1892 года.

84309.04.074 306.04.07.04.07.0



4830
41 2

Типография М. Бархударяна, Москва, Мясницкая, д. наслед. Апанова.

2881

(60)

ԼԻՆՅԱՐԴ ԵՎ ԳԵՐՏՐՈՒՂ

ՀԱՅՆՐԻՒ ՊԵՍՏԱԼՈՑՑՈՒ

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն 1)

«Ich will Schulmeister werden».

ՊԵՍՏԱԼՈՑՑԻ

Մեր հայրը մանկավարժական գրականութիւնը զուրկ է մանկավարժական աշխատութիւններից, դասական գրուածքների թարգմանութիւններից: Մենք զոյա մասին չենք էլ մտածել, այլ աշխատել ենք կցկտուր տեղեկութիւններ տալ կրթութեան մասին: Այսօր իմ առաջն է զրա՞ծ Պետալոցցու հարուստ գրականութեան առաջին նմուշը: (Նախ քան այս գրքի մասին զրելս) ասենք մի քանի խօսք Պետալոցցու մասին: Յովհաննէս հայնրիկ Պետալոցցին ծնուել է յունվարի 12, 1746 թ. Յիւրիկ քաղաքում: Վեց տարեկան հասակում կորցրեց նա իւր հօրը, որ բժիշկ էր և կրթուեց շատ սաճմանափակ շրջանում՝ իւր բարեպաշտ մօր և հաւատարիմ աղախին Բարեկի միջոցով: Մօր բարեպաշտութեան վրայ մեծ կրթական

1) Այս լօղումն արտատպուած է «Մուրճ» ամսագրի № 7, սակայն ենթարկուել է հեղինակի կողմից մի քանի փոփոխութիւնների:

նշանակութիւն ունեցաւ նորա պապը, որը գիւղական քահանայ էր և միևնոյն ժամանակ շատ ջանք էր դնում աղքատների խնամութեան և կրթութեան համար: Փոքրիկ ձանրիկը քիչ չէր այցելում իւր պապին, ամենաքիչը տարուայ մէջ մի երկու ամիս նորա մօտն էր դրնում և նորանից շատ բան լսում ու սովորում: Հանրիկը չէր կարողանում մոռանալ զործարանների բանւոր երեխաներին, որոնց տեսել էր պապի գիւղում: Ուսումնարանում ոգևորում էին նորան Բողմեր և Բրաւդինգեր ուսուցիչները Հին Հերոսներով: Ռուսոյի էմիլը նորա պաշտած զիւրքն էր, բայց նորա մէջ վառուել էր կամք միայն խեղճերին և աղքատներին օգնել, ինչպէս և ասում էր նորա պապը, ուստի և այդ պատճառով ըսկսեց ուսումնասիրել աստուածաբանութիւն: Նորա առաջին քարոզը եկեղեցում շատ անյաջող անցաւ. նա կապում էր և տեղ տեղ իւր մտքերի կապը կտրում էր: Պետալոցցու առաջին փորձի անյաջողութիւնը ստիպեց նորան թողնել աստուածաբանութիւնը և սովորել իրաւաբանութիւն: Նա մտածում էր, որ այդ վերջինով աւելի լաւ կարող է պաշտպանել ձեռնած ժողովրդի իրաւունքները: Սակայն անյաջող փորձերն և իւր մի բնկերով մեռնելուց առաջ արտասանած խօսքերն համոզեցին նորան, որ հարկաւոր է փորձ, և փորձուած անձնաւորութիւնը միայն կարող է այդ բնտրած ասպարիզում գործել: Պետալոցցին հիւանդացաւ, և նորան խորհուրդ տուին բնդհատել ուսումն, դնալ մի գիւղ, ուր և իրան նուիրեց հողագործութեան: Նա 1768-ին ձեռք բերեց Ցիւրիխի վաճառականական տան միջոցով մի անմշակ հող Սրգոյում և շինել տուեց մի տուն: 1769-ին պրսակուեց ցիւրիխեցի մի հարուստ վաճառականի ազնկայ հետ Աննա Շալթհեղ անունով: Նա թէև այստեղ հողագործութեամբ էր պարապում, սակայն վճռեց նաև

բանալ մի վարժանոց աղքատ երեխաների համար, և շուտով հաւաքեց 50 փոքրիկ երեխաներ: Ամառը պարապում էր իւր աշակերտների հետ հողագործութեամբ, իսկ ձմեռը դաս էր տալիս, սովորեցնում, կրթում էր նոցա: Բայց շուտով նա պէտք է անբախտանար: Կնոջ կարողութիւնը զոհելով ուսումնարանի համար, 1780-ին փակեց դպրոցը և նա ստիպուած էր թողնել իւր կալուածքը: Պետալոցցիի բարեկամները համարում էին նորան արդէն կորած մի մարդ և յիշաւի, 18 տարի ապրեց նա շատ նեղութիւնների մէջ:

Թողնելով հողագործութիւնը, նա նուիրուեց գրականութեան: 1780-ին լոյս տեսաւ նորա առաջին երկասիրութիւնը «Adendstunde eines Einsiedlers» (Միակեացի իրիկնոժամը): Շատերը այս աշխատասիրութիւնը շատախօսութիւն անուանեցին, ուստի Պետալոցցին մտածեց իւր մտքերն որոշ ձևակերպութեան ենթարկել և հրատարակեց 1781-ին մի ուրիշ աշխատութիւն «Լինհարդ և Դերարուզ, մի զիրք ժողովրդի համար» վերնագրով: Այդ զրքի մէջ ցոյց առեց նա իւր ապրանքը և ժողովրդի մէջ մեծ հռչակ ստացաւ: Այդ աշխատութեան յաջողութիւնը ոգևորելով նորան, նա հեղինակեց մի այլ զիրք «Բրիտտուր և Էյզան»: Պետալոցցու նպատակն էր, որ այս զրքովը լինի դասադիրք մարդկութեան բնդհանուր բեւախան գպրոցի, այն է՝ բնական դպրոցի: Սակայն այդ նպատակին չ'կարողացաւ ծառայել զիրքը, ըստ որում զրքի երկար ծառերը շատ ձանձրացուցիչ են, թէև մէջը մեծ մտքեր են արտայայտուած: Նոյն տարին դուրս եկան «Զւիցերական թերթ» շաբաթաթերթի մէջ մի յօդուած «Die Figuren zu meinem Abc Buche», մի շարք առարկաներ և մի յօդուած «Նետալոցութիւններ բնութեան ընթացքի մասին մարդկային սեռի դարգացման մէջ»: Այս աշխատութեան մէջ նա գանազանում է երեք

ստորագրութիւններ մարդկային զրուծեան, որոնք են՝
«մարդու բնական, ընկերական և բարոյական զրու-
թիւնները»:

Տասն և ութ տարի հազար մի նեղութիւններ կրե-
լուց յետոյ, յեղափոխութիւնը ձգեց նորան կրկին հա-
սարակական զործունէութեան մէջ: Պետաւրոցցին 52 տա-
րեկան էր և ցանկանում էին տալ նորան տեսչի պաշ-
տօն Սրգաուի սեմինարիայում: Սակայն այդ չ'կատար-
ուեց. 1798-ին, երբ Կանտոնը, Ունտերվալդէն Ֆրանսիա-
յիք այրեցին ու անապատ դարձրին, քաղմաթիւ որբ
երեխաներ թափառում էին այս ու այն տեղ, քաղցը
յագեցնելու համար: Կառավարութիւնը ստիպուած էր
մտածել դորա մասին, ուղարկեց չայնրիս Զոկկէին և
Պետաւրոցցուն: Նոքա հաւաքեցին 80 երեխաներ և դոյս
ապրուստն ու կրթութիւնը շատ դժուարին բան էր, նա
մանաւանդ նիւթական սուղ միջոցներում: Այստեղ ևս
նորա զործունէութիւնը երկար չ'տևեց. ըստ որում այն
սենեակները, ուր երեխաներն էին կրթւում, պէտք է
զինուորական հիւանդանոցի փոխադրուէր. ուստի և ըս-
տիպուած էր իւր սիրելի որբերին արտասուքը աչքերին,
ձանապարհ ցոյց տալ: Իսկ ինքը Պետաւրոցցին դնաց
տկարութեան պատճառով հանքային ջրերով յայտնի մի
քաղաք: Երկար այս ու այն կողմը թափառելուց յետոյ
նա հրատարակեց 1801-ին իւր հայեացքները դասաւու-
թեան և դպրոցական զործի վերաբերեալ «փնչպէս է
Գերարուզը սովորեցնում իւր երեխաներին» վերնադրով
մի դրբում, և ընտրեց իւր զործունէութեան համար Ի-
ֆերաոնը (Yverdon): Այստեղ ստացաւ նա «ժողովրդական
մարզարէ» կոչումն, նորան այցելում էին մինչև անգամ
օտար երկիրներից թագաւորներ, գիտնականներ, դրողներ,
ի միջի այլոց և փիլիսոփայ Հերբարտն, աշխարհագէտ
Բիտտեր, Շտերն, Բլոխման, Դելլորիւկ, Յիլլեր, Շտայներ

և Պլամանը: Այս վերջինը որ այցելեց նորան 1804 թ.
հետեւեալ կերպով է նկարագրում Պետաւրոցցուն. «Նա
կատարելապէս բնութեան մարդ է, միջակ հասակի և հա-
զուստի մէջ շատ անհոգ և կեղտոտ: Դէմքն է չեղտ և
յարմարութեան մէջ շատ բարի է, և երեսայի պէս շո-
ղաբորթող բնաւորութիւն ունի. հոգով անհանգիստ է,
ոչ մի տեղ դադար չունի, ուստի և մի երկար խօսակ-
ցութիւն անկարող է համբերութեամբ լսել. սակայն ամ-
բողջ օրեր զիտէ նստել իւր գրասենեակում և թէյադրել
ինչպէս մտքերը զալիս են. ապա յետոյ այդ թելադրածը
կարդում ու սրբագրում էր այնքան, մինչև որ ինքը
գոհ կը մնայ»: 1809-ին իւր վարժանոցի ուսուցիչների
թիւը 15 էր և աշակերտներինը 165: Այստեղ ևս վի-
ճակուած չէր նորան մինչև մահ գործել, նախ որ ծագել
էին խռովութիւններ ուսուցիչների մէջ, ապա 1814-ին
վախճանուեց Պետաւրոցցու հաւատարիմ կինը: Խեղճ ծե-
րունին արտասանեց իւր կնոջ դուգաղի վերայ՝ «Մենք
բոլորից վախճուած և ծաղրուած էինք, հիւանդութիւնը և
աղբատութիւնը մեր գլուխը կռացրել էր և մենք կերել
ենք մեր չոր հացը՝ արտասուքը մեր աչքերին, բայց ինչ
բան տուեց մեզ այն ոյժն, դիմանալ կեանքի բոլոր հար-
ուածներին»: Ահաւասիկ այս աղբիւրից էինք ստանում
ոյժ, սիրտ առնում, հաւատում իրար և մխիթարում,
մատնացոյց անելով միեւնոյն ժամանակ իւր ձեռքին բռն-
նած Աւետարանը. Պետաւրոցցին արդէն թուլացել էր,
նա չէր կարողանում հաշտուել այն զաղափարի հետ, թէ
իւր սիրելի Գերարուզը վախճանուել է: Պետաւրոցցիի
դպրոցի ուսուցիչներից մէկը 1818-ին հրատարակեց նորա
բոլոր գրուածները, որից զուտ արդիւնք ստացուեց 50,000
գուլդէն: Պետաւրոցցին այդ փողով որոշեց մի որբանոց
հիմնել Յիլնդիում: Իւր ծերութեան հասակում նա գրեց
նաև մի երկասիրութիւն «Իմ կեանքի վիճակը» վերնա-

գրով, որի մէջ նա խօսում է գլխաւորապէս իւր դպրոցի մասին: 1827-ի սկզբներին Պետալոցցին սաստիկ հիւանդացաւ: Այդ հիւանդութիւնը տեւեց զրեթէ մի ամիս և 17 փետրվարի 1827 թ. վախճանուեց: Նորա գերեզմանաքարի վերայ փորագրուած են հետեւեալ խօսքերը. «Ամեն ինչ ուրիշների համար, իսկ իւր համար ոչինչ»:

Պետալոցցին իւր ամբողջ կեանքը ծառայեցրեց մի գաղափարի, այն է՝ ժողովրդի կրթութեան, նա ներկայանում է որպէս հայր խեղճ և կրթութեան կարօտ ամբոխի: Նա համազուած էր, որ իւրաքանչիւր անհատ, լինի նա աղքատ ու ստոր դասակարգից և անընդունակ, պէտք է կրթուի, որ մարդկութեան պիտանի անդամ դառնայ: Նա ապացուցեց որ տարրական դաստանդութիւնը բոլոր դաստանդութիւնների հիմնաքարն է: Նա պահանջում էր զարգացում մարդկային բոլոր ոյժերի, նա գտաւ որ մարդկային բնահանութիւնը կրթութիւնը հիմքն է բոլոր մասնագիտական զարգացման: Ամեն դաստանդութեան սկիզբըն էր նորա համար՝ գիտողութիւնը: Նա ոչ թէ միայն ստեղծեց Գերմանիացում մի նոր ձև դաստանդութեան, այլ նորա գլխաւոր ծառայութիւնը այն է, որ նա ցոյց տւեց թէ ժողովրդի կրթութիւնը և ուսումը ազգային պէտք է լինի: Պետալոցցին մանկավարժական պատմութեան մէջ նոյն տեսակ աստղ է, ինչպէս Կոմենիոս, Ռուսօ, Ներբարտ:

Դառնանք «Լինհարդ և Գերարուդին»: Այս աշխատութիւնը Պետալոցցու ամենատաղանտաւոր զործն է: Նա ուղղում է այստեղ ցոյց տալ, որ մայրերից և նոյա կրթութիւնից կախումն ունի մի բնասանքի, հասարակութեան և պետութեան բարեկարգ վիճակի մէջ գտնուելը: «Ես կամենում եմ ժողովրդի կրթութիւնը յանձնել մայրերին», այս է այն գաղափարը, որով ամբողջ երկասիրութիւնը ներշնչուած է: Պետալոցցին ներկայացնում է

Գերարուդին, որպէս իդէալ, որը դարձնում է տունը Աստուծոյ տաճար, մանուկների սիրտը ու գլուխը կենդանացնում է իդէալական կրթութեան հողը: Զը նայելով որ այս զիրքը արծարծում է այսպիսի բարձր գաղափարներ, նա ձգմարիտ ժողովրդական գիրք է. նա նկարագրում է ժողովուրդը, թէ ինչպէս է նա ապրում և անդւում: Այս երկասիրութեան հիմնական գաղափարն է՝ իւրաքանչիւր ժողովրդի բարեկաւութիւնը, նորա լաւ վիճակը միայն կախումն ունի կրթութիւնից: Այս աշխատութիւնը թէև կարելի է դնել Ռուսօի «Էմիլ» շարքում, բայց չի կարող այդ վերջինին հաւասարուել, ըստ որում վերջինս ամփոփում է հեղինակի ամբողջ մանկավարժական ծրագիրը, մինչդեռ այստեղ միայն մի մեծ գաղափարի իրագործման մասին է խօսքը: Այս գրքի նշանակութիւնը այնու ամենայնիւ մեծ է և յեղափոխական ազդեցութիւն ունի և ամբողջ գերմանական ազգը շնորհակալ է Պետալոցցուն այդ աշխատութեան համար:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՐՈՈՒԴԱՐՆԱՆՑ.

Գերարուզը գիւղի ամենալաւ կինն է, սակայն նա
և իւր մատաղ զաւակները իրենց հօրից ու խորթից
զրկուելու և անջատուած, մերժուած, ամենաճանր թրչ-

ւառութեան մէջ ընկղմելու վտանգի մէջ էին, որովհետեւ
Լինհարդը չէր կարողանում գիտուց ձեռք վերցնել:
Գերտուղը տեսնում էր մօտակայ վտանգն և ըզ-
գացուած էր սրտով: Երբ նա իւրեանց մարգագետնից
թարմ խոտ էր բերում, կամ տախտակամածի վերայից
չոր խոտ վերցնում, և կամ կաթը մաքուր ամօնների
մէջ տեղաւորում, ախ, ամեն ժամանակ երկիւղ էր ազ-
դում նրա վրայ այն միտքն, որ իրենց մարգագետինը,
խոտի տեղն և իրենց խրճիթի կէսը շուտով իրենցից
կ'իսկն, և երբ զաւակները շրջապատում էին իրեն և
զիրկն ընկնում, առաւել ևս դիտում էր և այդ ժամա-
նակ միշտ արցունքը ցած էին գլորվում նրա այտերից:
Մինչև այժմ թէև նա կարողանում էր իւր գաղա-
նի լացը մանուկներից ծածկել, սակայն չորեքշաբթի օրը,
վերջին զատիկի առաջ, որովհետեւ իւր ամուսինն երկար
ժամանակ տուն չեկաւ, նրա վիշտը այնչափ աստեղացու-
ող, որ երեխաները նկատեցին նրա արցունքը: Ախ, մայր, ա-
ղաղակեցին նրանք միաբերան, դու լալիս ես, և ընկան
նրա զիրկը: Նրանց մարմին իւրաքանչիւր շարժողութիւնն
արտայայտում էր հոգս և երկիւղ: Երկուտ լացով, խո-
րին, տխուր դարմանք և անմուռն արցունքով շրջապա-
տեցին նրանք իրանց մօրը՝ նոյն իսկ մօր ձեռքին եղող
ծծկերն արտայայտեց ցաւի այնպիսի զգացմունք, որ
ցայժմ անյայտ էր նրան: Նրա հոգսի և երկիւղի առա-
ջին արտայայտութիւնն, նրա անշարժ աչքն, որ առաջին
անգամն էր նայում նրան այդպէս սուր կերպով և ա-
ռանց ծիծաղի, այնպէս վրդովեցին մօր սիրտն, որ նրա
լացը դարձաւ այժմ աղաղակ. բոլոր մանուկներն և ծրժ-
կերը լալիս էին մօր հետ միասին, և հէնց նոցա սարսա-
փելի լաց ու կոծի միջոցին Լինհարդը բացեց տան դուռը:
Գերտուղն երեսի վրայ ընկած էր իւր անկողնում:
Նա չ'յսեց դռան բացուիլը և չ'տեսաւ ներս մտնողին:

Մանուկները նոյնպէս չ'նկատեցին նորան, նրանք նույնում էին միայն իրենց ողբող մօրն և կախ էին ընկել նրա ձեռքերի, պարանոցի և զգեստների վրայից: Այսպէս դտաւ նրանց Լինհարդը:

Երկնային Աստուածը տեսնում է թշուառների արցունքն և վերջ դնում նոցա ցաւին: Գերտրուդն իր արցունքի մէջ դտաւ Աստուծոյ ոգորմութիւնը: Աստուծոյ զթութիւնը բերեց Լինհարդին՝ այս տեսարանին ականատես լինելու, որ այնպէս թափանցեց նորա հոգու մէջ, որ նրա անդամները ջնցուեցին: Մահուան գոյն ստացաւ նրա դէմքն և ընկճուած կերպով հազիւ կարողացաւ ասել. տէ՛ր իմ Աստուած, այս ի՞նչ է:—Այժմ միայն տեսաւ նրան մայրն, այժմ միայն նկատեցին նրան մանուկներն և դադարեցին լալուց: Մայրիկ, հայրիկն այստեղ է, գոչեցին երեխաները միաբերան և նոյն իսկ ծծկերն այլ ևս չէր լալիս: Ինչպէս որ անտառի առուակը կամ աւերող բոցը վերջապէս հանդարտվում է, այնպէս և կորչում է սարսափն և դառնում հանդարտ, մտածելու հոգաւ:

Գերտրուդը սիրում էր Լինհարդին և նրա ներկայութիւնը նոյն իսկ ամենախորին դժբախտութեան մէջ սփոփանք էր նրա համար, Լինհարդն ևս թողեց իւր առաջին սարսափը:

Գերտրուդ, ի՞նչ է այս աղէտի առիթն, որի մէջ գտնում եմ քեզ, ասաց նա:

Ո՛հ, սիրելիդ իմ, պատասխանեց Գերտրուդը, տխուր հոգսերը սքողում են սիրտս և երբ դու տանը չես, խորին տխրութիւնն առաւել ևս պատում է ինձ:

Գերտրուդ, պատասխանեց Լինհարդը, ևս զիտեմ թէ ինչու ես լալիս... թշուառաւ:

Գերտրուդը հեռացրեց մանուկներին և Լինհարդը ծածկեց իր դէմքը նրա զրկի մէջ, այլ ևս չէր կարողա-

նում խօսել: Գերտրուդը նոյնպէս լռեց մի փայրեան և թերեւեցաւ ցաւակցութեամբ իւր ամուսնու վրայ, որ դեռ ևս լալիս էր նրա գրկում: Այդ միջոցին Գերտրուդը ժողովեց իր բոլոր ուժերն և արիտցաւ՝ նրան հասկացնելու, որ նա այլ ևս ապագայում իւր զաւակներին այս դժբախտութեան և թշուառութեան մէջ չ'ձգէ:—Գերտրուդն երկեղած էր և հաւատում էր Աստուծուն, խօսելուց առաջ նա աղօթեց իր ամուսնու և զաւակների համար, նրա սիրտն ակներեւ ուրախացաւ, ասաւ աստուծոյ Լինհարդ, յոյսդ զիր Աստուծոյ ոգորմութեան վրայ և արիացիր պարտքդ կատարելու:

Ո՛վ Գերտրուդ, Գերտրուդ, ասում էր Լինհարդն և լալիս, և նրա արցունքը հոսում էր գետի նման:

Ո՛վ սիրելիդ իմ, քաջացիր, ասում էր Գերտրուդն, և հաւատաւ երկնային Աստուծուն, և այդպէս ամեն բան կրկին լաւ կ'գնայ: Ես շատ ցաւում եմ, որ քեզ լաց պատճառեցի: Սիրելիս, սիրով կ'ցանկայի ամեն տառապանք քեզնից ծածկել, դու գիտես, որ քեզ հետ լինելով հացն ու ջուրը յաղեցնում է ինձ. իսկ իմ կէս զիջերուպ խաղաղ ժամերի աշխատանքը բաւական է զաւակներին և քեզ համար: Սակայն, սիրելիս, եթէ ես հոգսերս քեզնից ծածկէի, չէի լինի զաւակներին մայրը և քո հաւատարիմ ամուսինը: Ո՛վ թանկագինս, դեռ ևս մեր զաւակների սիրտը լի է շնորհակալութեամբ և սիրով դէպի մեզ, սակայն եթէ մենք ծնողներ չ'մնանք, այն ժամանակ նրանց սէրն ու բարի սիրտն, որի վրայ եմ դրել ամբողջ յոյսս, պէտք է անպատճառ անհետանան: Եւ այն ժամանակ մտածի՛ր, սիրելիս, մտածի՛ր, թէ ի՞նչ կ'լինէր քո դրութիւնն, երբ քո նիկիտան, որ հէնց այժմից սիրով ապաստութեան և սեղհական օջաղի մասին է խօսում, առանց խրճի մնալով՝ ծառայ դառնար: Լինհարդ, երբ նա և միւս մեր բոլոր սիրելիները մեր

սխալմունքով աղքատացած, մի անգամ այլ ևս իրենց սրբաբան շնորհակալ չ'լինին մեզնից, այլ լան իւրեանց ծրնողների վրայ, կալո՞ղ էիր ապրել, Լի'նհարդ, և տեսներ, թէ ինչպէս քո Նիկլաար, քո Եօնասն, Լիզելին և քո Աննէլին—^հհ, Աստուած—օտարների սեղանից հաց են մուրում—ես կ'մեռնէի, եթէ այդ տեսնէի։—Այսպէս խօսեց Գերարդուզն և արցունքն հոսեց նրա այտերից։

Ոչ պակաս լալիս էր և Լինհարդը։ Ի՞նչ պիտի անեմ ես, զժբա՞ղդս. ի՞նչ կարող եմ անել։ Ես առաւել թշուառ եմ, քան թէ դու, գիտե՛ս։ Ո՛ր Գերարդուզ, Գերարդուզ։—Յետոյ լուեց դարձեալ, կցեց ձեռքերն և լալիս էր ահաբեկ։

Ո՛վ սիրելի, մի՛ վհաճուիր, ինչ էլ որ լինի, լսո՛ւի՛ր, որ խորհրդակցենք և մեզ օգնենք:

II.

ՄԻ ԿԻՆ, ՈՐ ՎՃԻՌՆԵՐ Է ԴՆՈՒՄ, ԻՐԱՔՈՐԾՈՒՄ
ԵՒ ԳՏՆՈՒՄ ՄԻ ՄԱՐԴ, ՈՐ ՀԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՏ
ՈՒՆԻ:

Ո՛ր Գերարուհի, Գերարուհի, սիրտս ցաւում է թըշ-
ւառութիւնս քեզ ասել ե քո հոգսերն աւելացնել: սա-
կայն ես պէտք է անեմ այդ: Եւ պարտ եմ հովմելին, տանուաւերին, դեռ ևս ե-
րեսուն զուրկէն¹), իսկ նա ոչ թէ մարդ, այլ մի շուն է
իր պարտապանների հանդէպ: Ա՛խ, երանի կեանքումս
նրան տեսած չ'իյնելի: Եթէ ես նրա պանդոկատանը չեմ

¹⁾ Գուլդէնը մի ըռւրլուց փոքր ինչ պակաս արժէ:

այցելում, սպառնում է նա ինձ օրէկեքի անտէնով, իսկ եթէ գնում եմ, քրանքիս և աշխատանքիս վատտակն ընկնում է նրա ձանկը: Այո, Գերարուդ, այս է մեր թըշ-տառութեան աղբիւրը:

Միրեկիս, պատասխանեց Գերարուդը, չե՞ս կարող Արների, կալուածատիրոջ, մօտ գնալ: Դու զիտես, թէ ինչպէ՞ս բոլոր այրիներն և որբերը գովում են նրան. սիրելիս, ես կարծում եմ, որ նա քեզ խորհուրդ կըտայ և կ'պաշտպանէ այդ մարդու դէմ:

Գերարուդ, պատասխանեց Լինհարդն, — ես չեմ կարող, ի՞նչ պէտք է ասեմ քո տանուտէրի դէմ, որ հազար ու մէկ բաներ է ասում համարձակ ու խորամանկ է և հարկւր ընկերներ և ձանապարհներ ունի մի աղքատ մարդու այնպէս անուանարկելու իշխանութեան տօնք, որ այլ ևս նրան չ'լսեն:

Գերտրուդ: Սիրելիս, ես ցայժմ ոչ մի իշխանաւորի
հետ չեմ խօսել: Բայց եթէ կարիքն և թշուառութիւնն
ինձ նորա մօտ տանէին, ես գիտեմ, ես կարող կ'լինէի
Ճշմարտութիւնն ուղղակի իւրաքանչիւր մարդու դէմ ա-
սել: Թանկագին բարեկամս, մի երկնչիւր, մտածիր իմ և
դաւաններիդ մասին և գնահատէ՛:

Գերարուդ, ասաց Լինհարդն, ես չեմ կարող, չեմ համարձակվում, ես անմեղ չեմ: Տանուտերն սառնապարտութեամբ ամբողջ զիւղը վկայ կ'երերէ, որ մի անպիտան ականաւոր եմ: Գերարուդ, ես անմեղ չեմ: Ի՞նչ կարող եմ ասել: Ոչ ոք չի ասիլ, որ ամեն բանում նա՛ ինձ մոլորեցրեց: Գերարուդ, եթէ կարողանայի, եթէ համարձակուէ՛ի, ի՛նչպէս սիրով կ'ցանկանայի այդ: Բայց եթէ անէի և չ'յաջողէի, մտածի՛ր, թէ ինչպէ՛ս վրէժխնդիր կ'ընէր նա:

Քեզ հարուստ է: Բայց եթե լռես էլ, նա անպատճառ
կ'հորժանես: Լի'նհարդ, մտածիր զաւակներիդ մասին

և զնա: Մեր սրտից այս անհանգստութեանը պէտք է
վերջ դրուի, — զնա, թէ չէ ես կերթամ: Եւ նա, որ
կին հարգ: Ո՞ր Գերարուդ, ես չեմ համարձակուում:
եթէ դու կարող ես — ան Սատուած, Գերարուդ, եթէ
կարող ես, զնա շուտով Արևերի մօտ և նախ նրան
ամեն բան:

Այո, ես կերթամ, ասաց Գերարուդը: Եւ
Այդ գիշերն աչ մի ժամ չ' քնեց նա, պակայն քնա-
ղուրկ գիշերն աղօթով անցնելով, նա առաւել զօրայաւ
— համարձակութիւն ատացաւ: Արևերի գիւղի տիրոջ
մօտ գնալու: Եւ վաղ առաւօտեան նա վերցրեց ծծկերին, որ
փթթում էր վարդի նման, և զնաց աղնուակոնի գիւ-
ղից երկու ժամ հեռու դանուող զոհակը:

Արևերն նստած էր զղեակի դռան առաջ Լօռքքու
տակ, երբ Գերարուդը նրան մօտեցաւ: Նա տեսաւ նրան,
տեսաւ ծծկերին նրա ձեռքի վրայ և թախծութիւն, տա-
ռապանք և ցամաքած արտօսքներ նրա կրեւի վրայ: Եւ
Ի՞նչ ես կամենում, աղջիկս, ո՞վ ես դու, ասաց
նա այնպէս սիրալի կերպով, որ Գերարուդը սիրտ առաւ
խօսելու:

Ես Գերարուդն եմ, ասաց նա, Բօննալի որմնադիր
Լինհարդի կինը:

Ի՞նչ մի քաջ կին ես, ասաց Արևերը: Ես քո մա-
նուկներին գերազանց եմ դասել գիւղի բոլոր մանուկնե-
րից: Նրանք առաւել բարեկիրթ և քաղաքավարի են
քան միւս բոլոր երեխաներն, և երեւում է, որ աւելի
լաւ են կերակրուում, թէև լսում եմ, որ դուք շատ աղ-
քատ էք: — Ի՞նչ ես կամենում, աղջիկս:

Ողորմած տէր, իմ ամուսինը վաղուց պարտական
է երեսուն զուլօն տանուաւոր հումքին, որ մի անգութ
մարդ է: Իսկ մօրեկցնում է նրան ստօրեկցնելով թըղ-

թախաղի ու ամեն տեսակ վատնութեան: Եւ որովհետեւ
ամուսինս զրանից վախենում է, չի կարող դրա պան-
դոկատունը չ'այցելել, թէև համարեա իւրաքանչիւր օր
իր վատական և իր դաւակների բերնի հացն այնտեղ է
թողնում: Ողորմած տէր, մենք եթէ մանկահաս զուակ-
ներ ունենք և առանց օգնութեան ու խորհրդի տանու-
աւորի դէմ, անկարելի է, որ մուրացկաններ չ' դռնանք:
Ես դիտեմ, որ դուք այրիներին և որբերին կարեկցում
էք, այդ պատճառով համարձակուեցայ ձեզ մօտ դալ
և մեր տնտեսութիւնը ձեզ տան: Ես բերել եմ հետս
դաւակներս խնայած բոլոր փողը ձեզ մօտ թողնելու,
որպէս ի կարողանամ խնդրել, որ այնպիսի կարգադրու-
թիւն անէք, որ տանուաւորը, մինչև իւր պարտքը վճա-
րենք, իմ ամուսինու չ'հարօտահարէ և չ'չարչարէ:

Արևերը վաղուց կասկածում էր հումքի վրայ: Նա
հասկացաւ իսկոյն այս դանդախի ճամբարութիւնն և
խնդրի խեղադրութիւնը: Նա վերցրեց իր առաջը դրած
թէյն և ասաց. դու, Գերարուդ, անօթի ես, խմիր այս
թէյն և զիղեցիկ մանուկիդ տուր այս կովից:

Կարմրելով կանգնած էր այնտեղ Գերարուդը: Այս
հայրական դորովն այնպէս շարժեց նրա սիրտն, որ իւր
արցունքը պահել չ'կարողացաւ: Արևերը պատմել տուեց
նրան տանուաւորի և նրա ընկերակիցների արարքներն և
շատ տարիների կարիքն ու հոգացողութիւնն և լսում
էր օւշադրութեամբ: Սպա հարցրեց. ի՞նչպէս կարողա-
ցար, Գերարուդ, զաւակներիդ խնայած դրամն պահել
այդպիսի կորիքի ժամանակ:

Գերարուդը պատասխանեց. Այդ թէև գիտար էր,
ողորմած տէր, սակայն ես այնպէս էի նկատում, որ իբր
թէ այդ փողն իմն չէ, և իբր թէ մի մեռնող իւր վեր-
ջին շնչի հետ տուել էր ինձ դաւակների համար պահե-
լու: Այսպէս, համարեա թէ ճիշտ այսպէս էի նկատում

8691

4830 41



ես: Երբ ամենախիստ կարիքի ժամանակ, ստիպուած էի լինում այդ փողից զաւակներին համար հաց դնել, այլ ևս հանգստութիւն չունէի, մինչև որ զիշերուայ աշխատանքիս վաստակով կրկին չխնայէի և պակասը չըլրացնէի: Այդ կարելի էր լինում ամեն ժամանակ, Գերարուդ, հարցրեց Արները:

Ողորմած տէր, երբ մարդս մի որ և է բանի հաստատ կերպով է ձեռնարկում, այդ աւելի յաջողում է նորան, քան թէ մարդ կարծում է, և Աստուած օգնում է ամենամեծ թշուառութեան մէջ, երբ մարդ կարիքի և հացի համար աղնուաբար է աշխատում, և աւելի քան թէ դուք ձեր փառքով կարող էք հաւատալ և ըմբռնել: Արները գլխաշարժուած էր այս կնոջ անմեղութեամբ և առաքինութեամբ, սակայն շարունակում էր հարցնել և ասաց. Գերարուդ, ո՞ւր է այդ խնայած փողը:

Գերարուդը Արների սեղանի վրայ դրեց եօթը հատ մաքուր կապոյիկներ, որոնց իւրաքանչիւրի մօտ դրուած էին տոմսակներ. տոմսակների վրայ դրուած էին, թէ ո՞ր կապոյն ումն է պատկանում, և թէ կարիքի ժամանակ Գերարուդն իւրաքանչիւրից ո՞րքան էր վերցրել և կրկին տեղը դրել:—Արներն ուշադրութեամբ կարդում էր այս տոմսակները: Գերարուդը տեսաւ այդ և կարմրելով ասաց. «Այս թղթերը պէտք է վերցրած լինէի, ողորմած տէր»:

Արները ժպտաց և շարունակում էր կարդալ, սակայն Գերարուդը կանգնած էր ամօթով և կարելի էր նկատել նրա սրտի յուզումն, որովհետև նա համեստ և խոնարհ էր և ամենավերջը յուշամօլութիւնից վշտացող:

Արները տեսաւ նրա անհանգստութիւնն և զգաց այն անմեղութեան վսեմութիւնը, որ մնում է ամօթով, երբ նրա առաքինութիւնն և իմաստութիւնը նկատվում է. նա վճռեց աւելի շնորհ անել այդ կնոջ համար, քան դա խնայել էր, և յոյս ունէր, որովհետև ճանաչեց նրա ար-

ժանաւորութիւնն և զիտէր, որ հազար կանանցից ո՛չ մէկը զրան չի նմանուիլ: Նա իւրաքանչիւր կապոյի վրայ աւելացրեց մի բան խճր կողմից և ասաց. երեսներից համար խնայած փողը յետ տա՛ր դարձեալ, Գերարուդ, ես իմ զրպանից երեսուն դուլդէն մի կողմն եմ դնում տանուտէրի համար, մինչև որ ձեր պարտքը վճարէք:—Գնա՛ տուն այժմ, Գերարուդ, վաղն առանց այդ էլ պէտք է գամ զիւղն, այնտեղ ես քո հանգստութիւնը կ'ապահովեմ հոմեից:

Գերարուդն ուրախութիւնից չէր կարողանում խօսել. նա հազիւ կարողացաւ կախաղելով ասել. «Աստուած վարձատրէ ձեզ, ողորմած տէր»: Ապա տուն վերադարձաւ սփոփուած սրտով՝ ծծկեր երեսան ձեռքին: Նա շտապում էր, աղօթում և շնորհակալ լինում Աստծուն երկալ ճանապարհի վերայ և շնորհակալութեան և յուսոյ արտօսող հոսում էր նրա աչիւրից, մինչև որ իր խոճիթը հասաւ:

Լինհարդը տեսաւ նրա դալը և հէնց աչքերից նրկատեց նրա սրտի սփոփանքը: Արդէն եկա՛ր, ասաց նա զիմելով նրան, բանդ յաջող է գնացել Արների մօտ:

Որտեղից զիտես այդ, ասաց Գերարուդը—ես նկատում եմ այդ հէնց դէմքիդ վրայ, բարի հրեշտակս, դու չես կարող կեղծել:—Ծիշա՛ որ այդ չեմ կարող ես, ասաց Գերարուդն, և եթէ կարողանայի էլ, չէի ցանկանալ այս բարի համբաւը քեզնից մի վայրկեան ևս ծածկել, Լինհարդ: Ապա պատմեց նրան հայր Արների բարութիւնը, թէ ինչպէս նա իւր խօսքերին հաւատ ընծայեց և օգնութիւն խոստացաւ: Յետոյ տուեց մանուկներին Արների ընծաներն և համբուրեց իւրաքանչիւրին առաւել ջերմ և ուրախ, որ վաղուց արդէն տեղի չէր ունեցել, և ասաց. աղօթեցէք ամեն օր Արների երջանկութեան համար, ինչպէս որ աղօթում էք և ձեր հօր երջանկութեան

Լինհարդ և Գերարուդ:

Համար: Արնները հոգում է իր բոլոր մարդոց լաւութեան, ինչպէս և ձեր լաւութեան համար և երբ զուր քաջ, խելացի և աշխատասէր կ'լինէք, այն ժամանակ նա կ'սիրէ ձեզ այնպէս, ինչպէս որ ես և ձեր հայրը սիրում ենք ձեզ: Այդ օրից սկսած որմնադրի օրդիքն առաւօտեան և երեկոյեան աղօթքի ժամանակ իրենց հօր և մօր անուանց հետ յիշում էին նաև Արնների անունը:

Գերարուզն և Լինհարզն որոշեցին նոր կարգադրութիւններ անել իրենց տան կարգապահութեան և գաւազների կրթութեան համար, և այդ օրը նրանց համար մի երջանիկ և հանդիսաւոր օր էր:

Լինհարզն արխայաւ կրկին և երեկոյեան Գերարուզը պատրաստեց նրա համար նրա սիրած կերակուրը. նրանք երկուսն ևս ուրախանում էին եկող առաւօտուայ Արնների օգնութեան և իրենց երկնային հօր բարութեան առթիւ:

Արններն ևս կարօտով սպասում էր առաւօտեան գալուն, որպէս զի մի գործ կատարէ,—ինչպիսին որ նա հազարն էր կատարում — իւր գոյութեանը մի արժէք տալու համար:

III.

ՄԻ ԱՆՄԻՐՏ ՄԱՐԴ.

Երբ միւլենոյն երեկոյեան տանուտէրն Արնների մօտ և կաւ նրա հրամանները խելու, նա տասց. ես ինքս անձամբ վաղը Բօննալ կ'գամ: Ես կ'ամենում եմ եկեղեցու շինութիւնը կարգի դնել: Տանուտէրը պատասխանեց. Ողորմած տէր, Ձերդ Մեծութեան պալատական որմնադիրը ժամանակ ունի՞ այժմ: Ոչ, պատասխանեց Արնները, բայց

քո զիւղում կայ մի որմնադիր՝ Լինհարզ անունով, որին ես սիրով կ'ընդհան ալդ վաստակը: Ինչո՞ւ նրան մի որ և է գործի համար չես առաջարկել ինձ:

Տանուտէրը զլուխ տուեց խոնարհաբար և ասաց. ես չէի համարձակուի մի աղքատ որմնադիր առաջարկել Ձերդ մեծութեան շինութիւնների համար:

Արն էր: Արդեօք նա այնպիսի աղին է մարդ է, տանուտէր, որին ես հաւատ ընծայել կարողանայի:

Տանուտէր: Այո՛, Ձերդ Ողորմածութիւնը կարող է նրան հաւատ ընծայել. նա չափից դուրս յատակամիտ մարդ է:

Արն էր: Առում են, որ նա մի առաքելի կին ունի, արդեօք այդ կինը մի շողակրատ չէ՞, հարցրեց Արնները ծանր կերպով:

Ոչ, տասց տանուտէրը. ճշմարիտ որ մի աշխատասէր և հանգարտ կին է:

Լաւ, տասց Արնները, վաղը ժամի իննին եղիր եկեղեցու դալթում, ես այնտեղ կ'պատահեմ քեզ:

Տանուտէրը վերագործաւ բոլորովին ուրախացած այս խօսակցութեան վրայ, որովհետեւ նա մտածում էր ինքն իրեն. այս մի նոր կիժան կով է ինձ համար, և արդէն ճրագրում էր որոգայթներ լարել, որով այդ շինութեան ժամանակ որմնադրի աշխատած փողերը դուրս պիտի գջլէր նրանից, նա շտապով վազեց տուն և դէպ որմնադրի փոքրիկ խրճիթը:

Արդէն մութը կոխել էր, երբ նա ուժգնութեամբ դուռը բողկեց:

Լինհարզն ու Գերարուզը նստած էին սեղանի շուրջը. կերակրի մնացորդը դրուած էր դեռ ևս նրանց առաջը: Լինհարզը ճանաչեց սակայն նախանձոտ տանուտէրի ձայնը, վախեցաւ և մի անկիւն ձգեց կերակուրը:

Թէեւ Գերարուզը սիրաւ էր տալիս նրան, որ չը վա-

խենայ և վստահ լինի Արների վրայ, բայց այնու ամենայնիւ դուռը բանալիս նա մեռելի գոյն ընդունեց:

Տանուտէրը, ինչպէս մի անյագ շուն, իսկոյն իմացաւ թագ կացրած կերկարի հոտը, բայց հաճոյական կերպարանք առաւ և ասաց ժպտալով. այդպէս հեշտ է առանց պանդկատան ապրել, այնպէս չէ՞, Լինհարդ:

Սա աչքերը խոնարհեցրեց և լռեց. սակայն Գերտրուդն առաւել համարձակ էր և ասաց. ի՞նչ է հրամայում պարոն տանուտէրը. զարմանալի է, որ նա այցելում է այսպիսի մի աղքատ տուն:

Հոռու ծածկեց իւր բարկութիւնը, ժպտաց և ասաց. ձմարիտ է, մի այսպիսի լաւ կերակուր ես չէի սպասում այստեղ, եթէ ոչ յաճախ կ'այցելէի:

Այդ խօսքը զայրացրեց Գերտրուդին: Տանուտէր, պատասխանեց նա, դու հոտոտում ես մեր ընթրիքն և չարագնում, դու պէտք է ամաչէիր՝ դառնացնել մի աղքատ մարդու սիրած ընթրիքն, որ գուցէ տարին երեք անգամ հազիւ ունի:

Ես այդպէս չար դիտաւորութեամբ չ'ասացի, պատասխանեց՝ տանուտէրը միշտ ծիծաղելով: Սակայն մի վայրկեանից յետոյ շարունակեց նա մի փոքր աւելի լռօրէն. դու շատ ամբարտաւան ես, Գերտրուդ, այդ չէ սաղում աղքատ մարդոց: Սակայն այժմ ես չեմ կամենում այդ բանի մասին խօսել: Ես միշտ ամուսնուղ բարին եմ ցանկացել, և երբ ծառայել կարող եմ, անում եմ այդ դորա համար եւ օրինակ կարող եմ բերել:

Գերտրուդ: Տանուտէր, իմ ամուսինն ամենայն օր քո պանդկատանը թղթախաղի և արբեցութեան է մատնում, իսկ ես տանը զաւակներիս հետ պէտք է ամեն տեսակ թշուառութիւն տանեմ, այս է ահա՛ քո արած ծառայութիւնը:

Հոռու էր: Դու անարդար ես վարւում ինձ հետ,

Գերտրուդ: Ծճմարիտ է, քո ամուսինը մի փոք ցոփ է, այդ ինքս էլ ասել եմ նրան, սակայն իմ պանդկատան մէջ ես պէտք է իւրաքանչիւրին, ով որ կամենում է, ուտելիք և խմելիք տամ: Այդ անում է և իւրաքանչիւր մարդ:

Գերտրուդ: Այո՛, բայց ամեն մարդ չէ սպառնում մի անբաղդ, աղքատ մարդուն օրէնքի անուկով, եթէ նա իւրաքանչիւր տարի իր պարտքը չէ կրկնապատկում:

Այժմ տանուտէրը չ'կարողացաւ այլ ևս իրեն զըստել: Նա դարձաւ կատաղաբար դէպի Լինհարդը. Լինհարդ, դու իմ մասին այդպիսի բաներ ես խօսում: — Պէտք է ես դեռ ևս իմ ականջովս լսեմ, թէ ինչպէս դուք, մուրացկաններ, ալեորիս պատուազուրկ և անուանազուրկ էք կամենում անել: Միթէ՞ ես միշտ դատաւորների առաջ չեմ տեսել քո հաշիւները: Լաւ է որ քո բոլոր տոմսակներն իմ ձեռքին են: Զլինի՛ թէ դու կամենում ես իմ պահանջմունքը մերժել, Լինհարդ:

Խօսքը զրա մասին չէ բոլորովին, ասաց Լինհարդը, Գերտրուդը ցանկանում է միայն, որ ես նորից պարտք չանեմ:

Տանուտէրը կրկին ուշքի եկաւ, մեղմացրեց իւր ձայնն և ասաց. այդ վատ բան չէ, բայց այնու ամենայնիւ դու ես մարդը, նա չ'պէտք է քեզ վախեցնէ:

Գերտրուդ: Ո՛չ, տանուտէր, ես կամենում եմ նրան քո հաշուէմատներից և նրա սիրուն թերթիկներից ազատել: Հոռու էլ: Բաւական է, որ վճարէ և նա աղատուած կլինի զրանից:

Գերտրուդ: Այդ կարող է անել նա, երբ նորից պարտք չանէ:

Հոռու էլ: Դու հպարտ ես, Գերտրուդ, կ'տեսնենք: Դու կամենում ես աւելի սիրով տանը քո ամուսնու հետ միայնակ մնալ, քան թոյլ տալ նրան մի բաժակ զինի խմել ինձ մօտ:

Ի հրաքալի Դոն մի անարդ մտորես, տանուտէր,
 նիւկայն քո խօսքերն ինձ յաւ չեն պատճառում: Եւ այն
 տանուտէր չէր կարող այլ ևս այս խօսքերին երկար
 դիմանալ: Նա զգաց, որ մի բան պատահած պէտք է լի-
 նի, որ այս կնոջը այդպիսի համարձակութիւն էր տուել:
 Այդ պատճառով չէր կարող իւր կատաղութիւնը մեղ-
 մացնել և հրաժեշտ տուել: Եւ ինչ որ իր ներքինը
 Ուրիշ հրամայելու բան չունէր, հարցրեց Գերարուդը:
 Ոչինչ, թէ այդպէս է, պատասխանեց Նուսէլը: Ի՞նչ
 պէտք կ'ընեց Գերարուդը ժպտալով և անայից ուղղակի
 նրա ներքինը: Այս աւելի ևս շփոթեցրեց տանուտէրին, և
 նա չգիտէր, թէ ինչ ընթացք բռնէ: Եւ այդպէս
 իր նախնիներով սանդղակի վրայից, մի թմրութեամբ էր
 խնդրէր, թէ արդեօք ի՞նչ պէտք է պատահած լինէր:
 Թէպէտ Լինհարդը բաւական չէր այս իրեքից, բայց
 տանուտէրն առաւել ևս:

IV.

Նա իւր նմանների մօտ է և հէնց այդտեղ կարելի
 է խաբերաներին ճանաչել:

Այժմ համարեալ կէս գիշեր էր, բայց հէնց որ տա-
 նուտէրը տան հօտան մարդ ուղարկեց Լինհարդի երկու
 հարկանների մօտ, որպէսզի նրանք խկոյն իւր մօտ դան:

Նրանք թէև արդէն անկողնի մէջ էին, բայց այնու-
 տենայնիւ չ'աւազան քալում:

Եւ նա հարցրեց այն ամեն բանի մասին, ինչ որ
 արել էին Լինհարդն և Գերարուդը մի քանի օրուայ
 ընթացքում: Բայց որովհետև նրանք կարողացան ինկոյն
 մի բան ասել, որով որոշեց պարզելու, նա գրանց վերջ
 կատաղեց:

Շնեք դուք, ինչ որ մարդ յիշեցանում է ձեզանից,
 չէք կարողանում երբէք զուգի բերել: Ինչո՞ւ համար ես
 պէտք է միշտ ձեր յիշարը լինիմ: Երբ դուք մամոզ
 բեռներով փայտ էք զոգանում, ես պէտք է ինձ չ'զիւ-
 ցող ձեռնդեմ, իրբ դուք կալուածատիրոջ արօտատեղի-
 ներում արածեցնում էք և բոլոր շնչապատաները վերց-
 նում, ե՞ս պէտք է լուեմ:

Դու Բուլլեր, քո որբերի հաշուի տւելի քան մի
 երրորդ մասը սխալ էր և—ես լուեցի: Կարծում ես թէ
 քո մի կտոր մկրտ չոր խոտով բաւականացայ: Դեռ ևս
 չէ՛ հնացել այդ դործը:

Եւ դու Քրուել, քո հանդի կէսը պատկանում է
 քո եղբոր զաւակներին: Դու ծեք դող: Ի՞նչ շահ ունիմ
 ես քեզնից, որ քեզ դահճի ձեռքը չեմ մատնում, որին
 որ դու իսկապէս պատկանում ես:

Այս խօսքերն երկուզ պատճառեցին հարկաններին:
 Ի՞նչ կարող ենք անել, պարօն տանուտէր:

Շնեք դուք, ինչ չէք կարող անել, ո՛չինչ չ'զի-
 աէք: Ես կատաղութիւնից զժպտւմ եմ: Ես պէտք է ի-
 մսնամ, թէ այս շարժ շարժապի կինն ի՞նչ է արել,
 ի՞նչ է նրա գոռոզութեան առիթը:

Այս ժամանակ Քրուելը մի բան մտաբերեց: Կայ,
 տանուտէր, կարծեմ ես կարող եմ ծառայել քեզ հէնց
 այժմ է միտքս գալի: Գերարուդն այսօր մինչև ճաշ տա-
 նը չէր և երեկոյեան նրա Լիդիին աղբիւրի վրայ փա-
 ուրջանում էր զգեալի տիրոջն, անպատճառ նա դղիա-
 կումն իղած կ'լինի: Առաջի գիշերն ողբ էր լսում նրանց
 սենեակից, սակայն ոչ գը չ'գիտէ թէ ինչու: Այսօր նրա
 քանք ամենքն առանձնապէս ուրախ են:

Ճանաչողը համոզուած էր այժմ որ Գերարուդը
 գզակաւում է եղել: Բարկութիւնն և անհանգստութիւնն
 այժմ առաւել ևս ուժով կատաղեցնում էին նրա հոգին:

Նա սարսափելի անէծքներ էր թափում, հայհոյում էր զգուցիկ խօսքերով Արքեպիսկոպոսին, որ ամեն մի մուրացկանի լսում է և երգում էր Լինհարդին և Գերտրուդին վերէփնդիր լինել: Բայց դուք պէտք է լուէք, հարեաններս, ես կամենում եմ այդ անպիտանների հետ քաղցրութեամբ վարուել, մինչև որ ժամանակը գայ: Աշխատեցէք խմանալ, թէ ինչ են անում նրանք, համբաւ բերէք ինձ: Կարեւոր եղած ժամանակը ես էլ ձեզ կ'օգնեմ:

Յետոյ Բուլլերին մի կողմը տարաւ և ասաց, դու ոչինչ չգիտես՝ զողացուած ծաղկամանների մասին, անյեալ օրը քեզ տեսել են սահման անցնելիս մի բարձրած էջով, ի՞նչ ունէիր հետդ:

Բուլլերը վախեցաւ, — ես-ես-ունէի — նա, նա, ասաց ամսուտէրը, — ինձ հաւատարիմ եղեր, ես քո կողմն եմ, երբ կարիքը պահանջէ:

Եւ հարեանները գնացին տուն:

Առաւօտն արդէն մօտ էր և հումելը շուռ ու մօռ էր գալիս իւր անկողնի մէջ մի ժամ շարունակ, մտածում էր վերէփնդիր լինելու մասին, ննջած ժամանակը կրճատցնում էր ատամները, զարկում էր ոտքերով, մինչև որ պայծառ օրը նրան անկողնից դուրս հանեց: Նա վրձնէր այժմ մի անգամ ևս Լինհարդին տեսնել, իրեն զնայել և ասել, որ ինքը նրան առաջարկել է Արքեպիսկոպոսին և կեղեցեց շինութեան համար: Նա ժողովեց իւր բոլոր ուժերը շողորթութեամբ համար և գնաց Լինհարդի մօտ:

Գերտրուդն և Լինհարդն այդ դիշեր այնպէս հանգիստ էին քնել, ինչպէս վաղուց արդէն պատահած էր. և առաւօտեան աղօթեցին այս օրուայ յաջողութեան համար: Նրանք յոյս ունէին հայր Արքեպիսկոպոսի օգնութեան վրայ: Այս յոյսը պատճառում էր նրանց հոգեկան հանգստութիւն և մի անսովոր ուրախալի զուարթութիւն:

Այսպէս գտաւ նրանց հումելը: Նա տեսաւ այդ և իւր բարկութիւնն առաւել ևս վառուեց, սակայն զսպեց իրեն, քաղցրութեամբ բարի լոյս ասաց նրանց և աւելացրեց. Լինհարդ, երեկ մենք լաւ չ'վարուեցինք միմեանց հետ, այդպէս չ'պէտք է լինի: Ես մի լաւ բան ունիմ ասելու քեզ: Ես հէնց այժմ գալիս եմ ողորմած պարոնի մօտից, նա խօսեց եկեղեցու շինութեանց և հարցրեց նոյնպէս քո մասին: Ես ասացի, որ դու շինութիւնը կարող ես զուլի բերել, և կարծում եմ, որ նա այդ քեզ կ'յանձնէ: Տեսում ես, այսպէս կարելի է միմեանց ծառայել, չ'պէտք է շուտով բարկանալ:

Լինհարդ: Շինութիւնը նա պէտք է զգուցիկ որմնադրին տուած լինի, դու արդէն վաղուց ասացիր այդ համայնքի մէջ:

Հումելը: Ես կարծում էի, բայց այդպէս չէ. զգուցիկ որմնադիրը միայն նախնի ծրագիրն է ներկայացրել, և կարող ես մտածել, որ նա իրեն մոռացած չ'ըլնի: Եթէ դու այդ ծրագրով ստանաւ շինութիւնը, փողը հողի նման կ'աշխատես: Լինհարդ, տեսնում ես այժմ, որ ես քո լաւն եմ ցանկանում:

Որմնադիրը շինութեան յուսով բաղդաւոր զգաց իրեն և սրտանց շնորհակալ եղաւ նրանից: Սակայն Գերտրուդը տեսնում էր, ինչպէս թագցրած բարկութիւնից զուլիատ էր տանուտէրի դէմքը և թէ ինչպէս նրա ծիծաղի տակ ծածկուած էր կատաղութիւն և այդ պատճառով ուրախ չէր: Այդ ժամանակ տանուտէրը դուրս գնաց և քայլելիս ասաց, մի ժամից յետոյ Արքեպիսկոպոսին, և Լինհարդի Լիզան, որ կանգնած էր իւր հօր կողքին, ասաց տանուտէրին, այդ դիտելը մենք արդէն երեկուանից: Հումելը թէև վախեցաւ այս խօսքերից, սակայն այնպէս ձեւարեց, ինք թէ չէ լսում, իսկ Գերտրուդը լաւ տեսնելով, որ տանուտէրը շինութեան ժամանակ վատա-

կած փողի համար է լրտեսում, շատ անհանդիսա էր:

V.

ՏԱՆՈՒՏԵՐԸ ԳՏՆՈՒՄ Է ԻԻՐ ՎԱՐՊԵՏԻՆ.

Արներն եկաւ եկեղեցու բակը, դիւղից նոյնպէս շատ ժողովուրդ եկաւ այնտեղ, որպէս զի տեսնէ իր բարի տիրոջը:

Այդպէս անդործ էք, թէ այսօր տօն է, որ ամենքդ ժամանակ ունիք այստեղ թափառելու, ասաց տանուտէրը մի քանիսին, որոնք նրա մօտն էին կանգնած, որովհետեւ նա միշտ զգուշանում էր, որ իրեն զրուած հրամանատեւն ինչ ոք չ'իմանայ: Սակայն Արները նկատեց այս և ներս ոչ ոք չ'իմանայ: Սակայն Արները նկատեց այս և ասաց բարձրաձայն. տանուտէր, ես ցանկանում եմ, որ իմ որդիքս այստեղ մնան և լսեն, թէ ինչպէս պէտք է կարգադրեմ շինութեան զործը, ինչո՞ւ ես զրանց արտաքսում:

Հոռու խոնարհեցաւ մինչև գետին և կանչեց հարեաններին բարձրաձայն. կրկին յետ դարձէք, նորին ոգորմածութիւնը թոյլ է տալիս:

Արներ: Տեսա՞ր եկեղեցու շինութեան գնահատուածութիւնը:

Տանուտէր: Այո՛, ոգորմած տէր:

Արներ: Ի՞նչ ես կարծում, կարո՞ղ է Լինհարին այդ շինութիւնն անել միւսնոյն գնով և լաւ ու զինացիուն կերպով:

Այո՛, ոգորմած տէր, պատասխանեց տանուտէրը բարձրաձայն և աւելացրեց հազիւ լսելի կերպով. որովհետեւ նա զիւղումն է բնակվում, կարծեմ որ կարող է մի փոքր առաւել արժան յանձն առնել:

Սակայն Արները պատասխանեց բարձր ձայնով. որքան որ պալատի որմնադրին պէտք է տայի, նոյնքան էլ տալիս եմ դրան: Կանչել տուր նրան և հոգա՛, որ այն ամենն, ինչ որ պալատի որմնադրին պէտք է արուէր, յանձնուի զրան:

Լրաբերի զալուց միայն մի քանի թուէ՛ առաջ Լինհարը գնացել էր վերին դիւղը, և այդ պատճառով Գերարուղը վճռեց անձամբ լրաբերի հետ գնալ եկեղեցու բակը և Արներին իւր հոգսերը յայտնել:

Սակայն երբ տանուտէրը Լինհարի փոխանակ Գերարուղին տեսաւ լրաբերի մօտ, մահաւան զոյն ստացաւ:

Արները նկատեց այդ և հարցրեց. ո՞ր տեղդ է ցաւում, պարոն տանուտէր:

Տանուտէր: Ո՛չ մի տեղս, ոգորմած տէր, ո՛չ մի տեղս. սակայն այս զիշեր յաւ չեմ քնել:

Հէնց մի այդպիսի բան կարելի էր նկատել, ասաց Արներն և նայեց ուղղակի նրա աչերին, յետոյ դարձաւ դէպի Գերարուղը, բարեկց բարեկամարար և ասաց. ամուսինդ այստեղ չէ՞: Սակայն այդ միւսնոյն է, ասա՛ միայն նրան, որ ինձ մօտ դայ: Ես կամենում եմ նրան յանձնել այս եկեղեցու շինութիւնը:

Գերարուղը կանգնած էր մի վայրկեան անխօս և չէր համարձակվում այդչափ բազմութեան առաջ խօսել:

Արներ: Ինչո՞ւ չես խօսում, Գերարուղ: Ես կամենում եմ շինութիւնը քօ ամուսնուն յանձնել ուղիղ այն պայմաններով, ինչպէս որ պալատի որմնադրին այդ յանձնն կ'առնէր: Այս պէտք է քեզ ուրախութիւն պատճառէր, Գերարուղ:

Գերարուղը կրկին ուշքի էր եկել և ասաց այժմ. ոգորմած տէր, եկեղեցին շատ մօտ է պանդոկաւանից:

Բոլոր ժողովուրդը սկսեց ծիծաղել, և որովհետեւ

շատերը կամենում էին իրենց ծիծաղը տանուտերից ծածկել, դարձան նրանից ուղղակի դէպի Արները: Սակայն տանուտերը, լաւ տեսնելով, որ Արներն ամեն բան նկատեց, վեր կացաւ այժմ՝ բարկացած, կանգնեց Գերարուտի դիմաց և ասաց. ի՞նչ ունիս իմ պանդոկատան դէմ:

Սակայն Արները շուտով ընդհատեց տանուտերին և ասաց. մի՞թէ այս խօսակցութիւնը քեզ է վերաբերում, տանուտեր, որ ընդմիջում ես: Յետոյ դարձաւ կրկին դէպի Գերարուտ և ասաց. ի՞նչ է այդ, ի՞նչ կայ, որ եկեղեցին շատ մօտ է պանդոկատնից:

Գերարուտը: Ողորմած տէ՛ր, աշխատելու ժամանակ մարդ ծարաւում է յաճախ, և երբ արբեցողների խումբը նրան կ'գրաւէ ամեն տեսակ միջոցներով՝ թէ հաճոյականութեամբ և թէ ծաղրով, թէ գինի խմելով և թէ գրազ տալով: Ախ Աստուած իմ, Աստուած, ի՞նչ պէս կարող է նա դիմանալ: Եւ երբ նա կրկին մի փոքր պարտք կ'ունենայ, դարձեալ կ'կապուի: Ողորմած տէ՛ր, եթէ դուք գիտենայի՛ք, թէ ինչպէս այսպիսի տներում միակ մի երեկոն կարող է աղքատ մարդոց թակարդի մէջ ձգել, որի միջից ազատուել համարեա՛ թէ անկարելի է:

Արներ: Ես գիտեմ այդ, Գերարուտ, և զայրացած եմ քո երեկուայ պատմածի վրայ: Այստեղ, քո աչքի առաջ և ամբողջ ժողովրդի ներկայութեամբ կամենում եմ քեզ ցոյց տալ, որ ես չեմ կամենում, որ աղքատ մարդիկ ծնշուին:

Եւ իսկոյն դարձաւ նա դէպի տանուտէրն և ասաց խիստ ձայնով և թափանցող հայեացքով. տանուտէ՛ր, ճշմարիտ է, որ խեղճ մարդիկ քո տանը ծնշում, զըրկում և խաբւում են:

Ուշքը կորցրած և դիակի նման գունատ տանուտէրը պատասխանեց. իմ կեանքում, ողորմած տէ՛ր, այսպիսի բան երբէք չէ պատահել ինձ, այն օրից երբ ես կամ

և տանուտէր եմ, ասաց նա, սրբեց իւր ճակատի քրտինքը, հաղաց և սկսեց դարձեալ—սարսափելի է:

Արներ: Դու անհանգիստ ես, տանուտէ՛ր: Հարցը շատ պարզ է: Ծշմարիտ է, որ դու խեղճ մարդոց ծնշում, մոլորեցնում ես և քո պանդոկատան մէջ այնպիսի որոգայթի մէջ ձգում, որ դժբախտացնում է նրանց ընտանիքը:

Տանուտէր: Ո՛չ, ի հարկէ ո՛չ, ողորմած տէ՛ր: Այս է մոլորացկաններին ծառայելու վարձատրութիւնը: Ես պէտք է այդ առաջուց մտածէի: Ամեն անգամ մարդ այսպիսի շնորհակալութիւն է ընդունում վճարելու փոխանակ:

Արներ: Վճարելու վերաբերմամբ հոգս մի քաշիր, հարցը նրանումն է միայն թէ արդեօք այս կիւնը ստո՞ւմ է:

Տանուտէր: Այո՛, ի հարկէ, ողորմած տէ՛ր, ես այդ հազար կերպ կ'ապացուցանեմ:

Արներ: Բաւական է և միայն մի կերպ, տանուտէր: Սակայն զգուշացիր: Դու երէկ ասում էիր, որ Գերարուտը մի քաջ, խաղաղ և աշխատասէր կին է և շաղակրատ չէ:

Ես չգիտեմ, ես... ես... մտաբերում եմ... դուք ինձ... ես նրան... ես նրան... այդպէս կարծեցի, ասաց շնչասպառ տանուտէրը:

Արներ: Դու այնպէս անհանգիստ ես այժմ, տանուտէր, որ քեզ հետ կարելի չէ խօսել. ամենից լաւն է, ես կ'տեղեկանամ դորա մասին ներկայ եղող հարեաններից: Եւ իսկոյն դարձաւ նա դէպի այն երկու ծեր մարդիկն, որ հանգիստ, ուշադիր և ծանրաբարոյ կանգնած էին այնտեղ և ասաց նրանց. ճշմարիտ է, սիրելի հարեաններ, որ ձեր պանդոկատանը մարդոց ծնշում և զայլ թակդեցնում են: Այդ մարդիկը նայում էին միմեանց երեսին և չէին համարձակվում խօսել, սակայն Արները

քաջալերեց նրանց սիրալի կերպով. մի՛ վախենաք, ասացէ՛ք ինձ պարզապէս ճշմարիտը: Այդ աւելի քան ճշմարիտ է, ողորմած աէ՛ր. բայց հնչալէ՞ս պէտք է մենք, խեղճ մարդիկս, տանուտէրի դէմ դանդաւորուենք, ասաց վերջապէս նա, որ աւելի ծեր էր, սակայն այնպէս կամաց, որ միայն Արները կարող էր հասկանալ: Բաւական է, ծերուէի ասաց Արներն և դարձաւ կրկին դէպի տանուտէրը. իսկապէս եօ այժմ նրա համար չեմ այստեղ, որ այդ դանդաւորները քննեմ, սակայն հաստատ է, որ ես իմ ազքատ հպատակներին կամենում եմ բոլոր ճնշումներից ազատ տեսնել, և վաղուց արդէն մտածում էի, որ ոչ մի տանուտէր չպէտք է պանդոկապետ լինի: Բայց ես կամենում եմ այս մինչև երկուշաբթի յետաձգել: Գերարժէք, ասա՛ քո ամուսնուն, որ ինձ մօտ գայ և այժմ հանգիստ եղիր նրա վերաբերմամբ և մի՛ վախենալ պանդոկատան վտանգներից: Դրանից յետոյ Արները պարապեց մի քանի դործերով և երբ վերջացրեց, գնաց մօտակայ անտառը, և արդէն բաւականին ուշ էր, երբ նա տուն վերադարձաւ: Տանուտէրը նոյնպէս, որ Արներին պէտք է ընկերակցէր անտառում, գիշերը միայն տուն դարձաւ:

Երբ սա մօտեցաւ իւր տանը, իւր սենեակում լոյս չտեսաւ և ոչ մի մարդու ձայն չ'լսեց այնտեղից, մի չար նախազգաց, որովհետեւ սովորաբար նրա տունը միշտ լի էր և բոլոր լուսամուտները լուսաւորուած՝ իւրաքանչիւր սեղանի վրայ դրուած ճրագներից. իսկ կոնծողների աղաղակները թնդում էին գիշերուան խաղաղութեան մէջ, այնպէս որ փողոցի ներքին ծայրից կարելի էր լսել, թէ և փողոցն երկար է և տանուտէրի տունը նրա վերին ծայրին է դանվում: Այս անսովոր խաղաղութիւնից տանուտէրը շատ վախեցաւ: Նա կատաղութեամբ բացեց դուռն և ասաց. այս ի՞նչ կ'նշանակէ, այս ի՞նչ կ'նշանակէ, որ այստեղ մարդ չկայ: Նրա կինն ողջում էր մի անկիւ-

նում: Այ մարդ, դու կրկին այստե՞ղ ես, Աստուած իմ, ի՞նչ դժբաղդութիւն է պատահել: Քո թշնամիները ուրախանում են գիւղում և ոչ մի մարդ չէ համարձակում գոնէ մի բաժակ գինի խմել մեզ մօտ: Ամենքն ասում են, որ քեզ անտառից տարել են Արները:

Ինչպէս որ բռնուած վարազը կապած ժամանակ մըթմըթում է, բանում է իւր ժանիքները, ոլորում աչերն և կատաղութիւն արտայայտում, այնպէս և կատաղեց այժմ հոռմէլը. սկսեց ոտքով տրոփել և աղաղակել և մտածում էր. Արներից վրէժխնդիր լինել: Յետոյ սկսեց ինքն իրեն խօսել. այսպէս զրկվում է երկիրն իւր իրաւունքներից: Նա կամենում է պանդոկապետ լինելու իրաւունքն ինձնից յափշտակել և իրեն սեփականել: Անյիշելի ժամանակներից տանուտէրները միշտ պանդոկապետ են եղած, ամեն դործ մեր ձեռքովն էր անցնում: Իսկ սա այժմ ինքն է ամենայն տեղ վազում, հարցնում ամեն մի ջնչին բանի մասին, ինչպէս մի գիւղական խալիֆայ, այդ պատճառով և այժմ ամեն մի տղայ ընդդիմադրում է պատուաւորին և ասում, որ ինքն կարող է անձամբ Արների հեր խօսել:

Այսպիսով դատարանը զրկւում է իւր նշանակութիւնից և մենք նստում լուծւում ենք, ինչպէս միւս անպիտանները, մինչդեռ նա մեզնով անպատում և կործանում է երկրի հին իրաւունքները:

Այսպէս յեղաշրջում էր խաբեբան աղնիւ տիրոջ բարի և իմաստուն դործերը մըթմըթում, մտածում էր վրէժխնդրութեան մասին մինչև որ քնեց:

ԻՄԿ ՌԱՄԿԱԿԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ.

Սակայն առաւօտեան նա վաղ վեր կացաւ և սկսեց պատուհանի տակ երգել և սուլել, որպէս զի տեսնողները տեսնեն, որ նա երեկուայ դէպքի մասին չէ հոգում: Բայց նրա հարեան Ֆրիցը կանչեց փողոցի միւս կողմից. այսպէս կանուխ արդէն հիւրեր ունիս, որ այդպէս ուրախ ես, ծիծաղեց ինքն իրեն:

Նրանք կը գան շուտով, Ֆրից հոպսասա՛մ, հայսասա՛մ, «սալորը թուզ չէ», ասաց տանուտէրը. մեկնեց օդի թափաղը պատուհանից դուրս և կոչեց. Ֆրից, ուզո՞ւմ ես մի մի կոնծենք: Դեռ ևս շատ կանուխ է, պատասխանեց Ֆրիցը, ես ուզում եմ սպասել մինչև որ աւելի մարդիկ գան:—Դու միշտ նոյն խարամանկն ես, ասաց տանուտէրը, բայց հաւատա՛, որ երեկուայ կատակն այդպիսի վատ հետեանք չի ունենայ: Ոչ մի թռչնակ այնչափ բարձր չէ թռչում, նա իջնում է կրկին ցած:

Զգիտեմ, պատասխանեց Ֆրիցը, իմ ասած թռչունը դեռ ևս չի իջել: Սակայն դուք է մենք խօսում ենք տարբեր թռչունների մասին: Նախաձաշի են կանչում, տանուտէր, ուզո՞ւմ ես ինձ հետ նախաձաշել, այս ասելով Ֆրիցը փակեց պատուհանը:

Կարճ կտրից, փրնթփրնթաց տանուտէրը ինքն իրեն, այնպէս շարժեց գլուխը, որ մազերն և ոտներն դողացին: Կարծեմ որ սատանայի աշխատանք պիտի ունենամ, մինչև որ երեկուայ եղելութիւնը մոռացութեան տրուի: Այսպէս էր ասում նա ինքն իրեն, բաժակը լցնում, խմում և նորից խօսում. արիացի՛ր, կ'զայ ժամանակը, կ'զայ և խորհուրդը: Այսօր շաբաթ է, յիմարները իրենց խուզիկ

են տալիս: Կ'երթամ սափրիչի տան մօտ, և այնտեղ մի բաժակ զինով ամենքը կը հնազանդուին մէկը միւսի և տակից: Գիւղացիները ինձ քահանայից տանն անգամ աւելի են հաւատում: Այսպէս ասաց տանուտէրն ինքն իրեն և ապա կնոջը. լցրու խոզի փուչիկը ծխախոտով, սակայն ոչ իմ դործ ածած, այլ միայն այն հոտածից, զա լաւ է անպիտանների համար: Եւ երբ սափրիչի աշակերտը զինի տանելու դայ, սուր նրան երեք անգամ ծծմբախառնած զինուց և իւրաքանչիւր չափի մէջ լցրու մի բաժակ օդի: Յետոյ նա դուրս գնաց, բայց փողոցի վրայ, դեռ ևս տանից մօտ, նորից մտածեց, դարձաւ յետ ու ասաց իւր կնոջը. կարող է պատահել որ անպիտանները հետներս խմեն, ես պէտք է զգուշանամ, ուղարկիր ինձ դեղին ներկած ջրից, երբ ես la Cafe պահանջեմ, և ինքդ անձամբ բեր: Յետոյ դարձեալ դուրս գնաց, բայց սափրիչին հասնելուց առաջ ուսումնարանի մօտի Լօուքու տակ նա պատահեց Նիքէլ Շպիցին և Եօզէլի Բուբէլին:

Ո՞ւր ես գնում այդպէս շաբաթ օրուայ, պարոն տանուտէր, հարցրեց Նիքէլ Շպիցը:

Տանուտէր: Պէտք է երեսո սափրել տամ:

Նիքէլ: Զարմանալի բան է, որ դու արդէն շաբաթ առաւօտ ժամանակ ունիս:

Տանուտէր: Ուղիղ է ասածդ, տարուայ ընթացքում միշտ այդպէս չէ լինում:

Նիքէլ: Ոչ, երկար ժամանակ է, որ դու միշտ կիրակի առաւօտ քարոզի ժամանակն էիր գալիս վարսավիրի մօտ:

Տանուտէր: Այո՛, մի երկու անգամ:

Նիքէլ: Այո՛, մի երկու և վերջին անգամ, այն օրից, երբ տէրտէրն քո շունն եկեղեցուց դուրս հանել տուեց, այլ ևս եկեղեցի չես գնում:

Տանուտէր: Դու խելար ես: Նիքէյ, որ այդպիսի բաներ ես խօսում, մարդ պէտք է ուտէ և մոռանայ, շան հալածեղն ես վաղուց մոռացել եմ:

Նիքէյ: Ես դրանով չէի բաւականանալ, եթէ տէրտէր լինէի:

Տանուտէր: Դու խելօք չես, Նիքէյ, ինչո՞ւ չէ. սակայն եկէք սենեակ, դուցէ այնտեղ զինի առնող լինի:

Նիքէյ: Դու սավորիչին ծառայութիւն կանես, այ եթէ նա իւր տանը զինի խմեցնել տայ ուրիշներին¹⁾....

Տանուտէր: Ասածիդ կիսով չափ անգամ ազահ չեմ. այժմ ես կամենում եմ պանդոկապետութեան իրաւունքը բոլորովին խլել: Սակայն, Նիքէյ, այդ օրին չենք հասել դեռ ևս: Նա, որի մասին ես ակնարկում եմ, դեռ ևս ամենաքիչը վեց շաբաթուայ և երեք օրուայ աշխատանք ունի, մինչև որ ստանայ այդ, Նիքէյ: Ես հաւատում եմ այդ, բայց այնու ամենայնիւ քեզ համար լաւ չէ, որ երիտասարդ պարոնն իր պապի հաւատը փոխեց քո վերաբերութեամբ:

Տանուտէր: Այո՞, նա կատարելապէս իւր պապի հաւատը չունի:

Նիքէյ: Ես վստահ եմ մինչև անգամ, որ նա ո՛չ մի կէտում տասերկու պատուիրաններից և ոչ մէկի վերաբերութեամբ նա իւր պապի հաւատակիցը չէ:

Տանուտէր: Կարո՞ղ է պատահել, սակայն ծերն իւր հաւատով ինձ համար մի այլ մարդ էր:

Նիքէյ: Հարկաւ: Նրա հաւատի առաջին պատուիրանն էր. ես հաւատում եմ քեզ, իմ տանուտէրին:

Տանուտէր: Այդ զուարճալի է, սակայն ինչպէ՞ս էր կոչվում միւսը:

¹⁾ Տանուտէրն իբրև պանդոկապետ իրաւունք չէր տալիս, որ մի այլ տան մէջ, բացի իւր պանդոկից, մի որ և դէպքի առիթով զինի տրուի ուրիշներին:

Նիքէյ: Այդ չ'զիտեմ ես այժմ, կարծում եմ այսպէս էր. բացի քեզանից, իմ տանուտէրից, ես ոչ ոքի խօսքին չեմ հաւատում:

Տանուտէր: Դու պէտք է տէրտէր դառնայիր, Նիքէյ, դու ոչ միայն կը բացատրէիր քրիստոնէական վարդապետութիւնը, այլ մէկն էլ կը յօրինէիր:

Նիքէյ: Այդ անելու թոյլ չէին տալ ինձ: Սակայն եթէ անէի, ես այնպէս գերմաներէն և այնպէս պարզ կանէի, որ մանուկներն առանց տէրտէրի հասկանային, այն ժամանակ բնականաբար նա այլ ևս բանի պէտք չէր լինի:

Տանուտէր: Շարունակենք մեր խօսքը, Նիքէյ, այդ վարդապետութիւնն էլ նոյն է ինձ համար, ինչ որ մի այլ բան. ապագայից երբէք տւելի լաւը չի կարելի սպասել:

Նիքէյ: Այդ մի առած է, որ երբեմն ճշմարիտ է և երբեմն ո՛չ, քեզ համար, ինչպէս երևում է, ուղիղ է այս անգամ նոր կալուածատիրոջ վերաբերմամբ:

Տանուտէր: Դեռ ուրիշներին էլ կը յարմարուի, եթէ օրինաւոր կերպով սպասէք: Ես ինձ համար այնչափ էլ երկիւղ չեմ կրում այս նոյն պարոնից. իւրաքանչիւրն իր վարպետը կը գտնի:

Նիքէյ: Այդ ճշմարիտ է, սակայն այնու ամենայնիւ քո հին ժամանակն անցեալ ամառուայ¹⁾ հետ գետնի տակն է:

Տանուտէր: Նիքէյ, ես հօ մի անգամ ունեցայ. թող այժմ մի ուրիշը որոնէ:

Նիքէյ: Այդ ճշմարիտ է, դու ունեցար և այն շատ

¹⁾ Անցեալ ամառ Թադեոս Արնէր պապին: Արնէրի հայրը շատ տարիներ առաջ պրուսական ծառայութեան մէջ վախճանուել էր կոռի ժամանակ:

լաւ էր, և ի հարկէ այդպէս կ'ընէր, քանի որ գրադիրը
և փոխանորդը քո պարտապաններն էին:

Տանուտէր: Այդպէս խօսում էին, բայց այդ ձրշ-
մարիա չէր:

Նիքէյ: Ինչպէ՞ս կարող ես այժմ այդ ասել, չէ որ
դու մի երկուսի հետ մէջ ունեցար, երբ նրանք փողը չէին
կամենում վերադարձնել:

Տանուտէր: Խեղար, կարծես թէ ամեն բան գիտես:

Նիքէյ: Դեռ ես գրանից տուած էլ շատ բան գի-
տեմ, ես գիտեմ դարձեալ, թէ դու ինչպէս Ռուդիի հօր
հետ անխիղճ դատ վարեցիր և թէ ինչպէս քեզ հանդի-
պեցի շան որջի մօտ դարմանի մէջ Ռուդիի պատուհա-
նի առաջ՝ փորի վրայ ընկած, կը նրա փատաբանը նրա
մօտ էր: Մինչև առաւօտեան ժամի երկուսը դու փորիդ
վրայ ընկած՝ լսում էիր, ինչ որ սննեակում խօսում
էին: Այն օրն ես գիշերապահ էի և ամբողջ շաբաթը
քեզից ձրի գինի էի սպանում, որպէս զի լռեմ:

Տանուտէր: Դու մի հերետիկոս ես, ասածիդ մի
խօսքն անգամ ճշմարիտ չէ, բանդ բոլոր կ'ընէր, եթէ
ապացուցանելու ստիպուած լինէիր:

Նիքէյ: Ապացուցանելու մասին չէ այժմ խօսքը,
բայց որ այդ ճշմարիտ է, ինքդ լաւ գիտես:

Տանուտէր: Լաւ է, որ դու յիտ ես արնում
խօսքը:

Նիքէյ: Սատանան մտքեց գլխիդ մէջ՝ մութ գի-
շերուայ ժամանակ դարմանի տակից տկանջ գնելու միտ-
քը: Դու լսեցիր բոլոր խօսքերը և գրանով կարողացար
գրադրի մօտ քո խակական ցուցմունքը յեղաշրջել:

Տանուտէր: Ինչե՞ր ես խօսում:

Նիքէյ: Ինչեր եմ խօսում. եթէ գրադիրը քո խ-
կական ցուցմունքները (ներկայանալուց առաջ) չ'փոփո-
խէր դատաւորին ներկայանալուց առաջ, այն ժամանակ

Ռուդին այժմ կ'ունենար իւր մարդագետին և Վիւստն
ու Կայբախերն ստիպուած չէին լինի երդուելու:

Տանուտէր: Այո՛, դու այնպէս ես հասկանում
գործն, ինչպէս վարժապետն երապեղէն:

Նիքէյ: Եթէ ես այդ Հասկանալի, քեզից կը սո-
վորէի: Աւելի քան քսան անգամ ծիծաղել ես դու ինձ
մօտ գրադրի, քո հնազանդ ծառայի վրայ:

Տանուտէր: Այո՛, այդ ճիշտ է, սակայն այն, ինչ
որ դու ասում ես, նա չէր անում: Եթէ ոչ ճշմարիտ է,
որ նա մի խորամանկ անտանայ էր: Աստուած ողորմի
նրա հոգուն, արդէն սուրբ Միքայէլին 10 տարի կ'ընէի,
ինչ որ նա գետնի տակն է:

Նիքէյ: Ինչ որ նա դժոխքն է եղել, կամենում
էիր ասել:

Տանուտէր: Այդ լաւ չէ, մեռեալների մասին չը
պէտք է չարախօսել:

Նիքէյ: Իրաւունք ունիս, եթէ ոչ կպատմէի թէ
նա ինչպէս նիոպաի որդւոյ հետ վարուեց:

Տանուտէր: Ինչպէս երևում է, նա մահուան ան-
կողնում քեզ խոստովանել է, որ դու ամեն բան լաւ
գիտես:

Նիքէյ: Ես գիտեմ այդ:

Տանուտէր: Ամենից լաւն այն է որ ես գործը
տարայ: Եթէ դու գիտենայիր, որ ես այդ գործը տանու-
եմ տուել, այն ժամանակ ես կը ցուէի:

Նիքէյ: Ոչ, ես լաւ գիտեմ, որ դու գործը տարար,
բայց նոյնպէս գիտեմ թէ ինչպէս:

Տանուտէր: Գուցէ դուցէ և ոչ:

Նիքէյ: Աստուած պահէ դրէից այն բոլոր մարդ-
կանց, որոնք աղքատ են:

Տանուտէր: Իրաւունք ունիս, միայն պատուաւոր
և հարստութիւն ունեցողը պէտք է իրաւունք անենային

դատարանի առաջ գրելու: Այդ լաւ կլինէր, և աւելի լաւ կլինէր, նիքէյ: Սակայն ինչ արած. մարդ պէտք է բաւականանայ եղանակ:

Նիքէյ: Տանուտէր, քո իմաստուն խօսքը յիշեցնում է ինձ մի առակ, որ ես մի անգամ լսեցի մի էլզասցի ուխտաւորից: Սա պատմեց սեղանի շուրջը ժողովուած բոլոր մարդկանց առաջ, որ մի միայնակեաց ամբողջ աշխարհը նկարագրել է մի պռակների գրքի մէջ և ինքը համարեաւ ամբողջ գիրքը բերանացի գիտէ: Մենք խնդրեցինք, որ նա այդ առակներից մէկը պատմէ, և նա պատմեց ուղիղ այն առակը, որ այժմ դու ինձ յիշեցրիր:

Տանուտէր: Եւ ո՞րն է այդ, շատախօս:

Նիքէյ: Այդ հետեւեալն է. — Բաղդաւորապէս գիտեմ դեռ ևս — «Ոչխարը գանգատուում և լալիս էր, որ գայլն, աղուէսը, շունն և սպանդարաւոր նրան սաստիկ չարչարում են: Մի աղուէս, որ հէնց ոչխարանոցի առաջն էր կանգնած, լսեց այդ գանգատը և ասաց ոչխարին. «միշտ պէտք է բաւական լինել այն իմաստուն կարգերից, որ աշխարհումս գոյութիւն ունին, իթէ այլ կերպ լինէր, աւելի ևս վատթար կ'լինէր»: «Իրա հետ համաձայն եմ, պատասխանեց ոչխարը, երբ ոչխարանոցի դուռը փակ է, բայց եթէ բաց լինէր, այն ժամանակ այդ մի ճշմարտութիւն չէր լինի ինձ համար:»

Իրանից նա հանեց հետեւեալ բարոյականը. «հարկաւ լաւ է, որ գայլերը, աղուէսներն և գիշատիչ կենդանիները գոյութիւն ունին: Սակայն նոյնպէս, լաւ է, որ ոչխարանոցներն օրինաւոր տակաւ են, որ բարի և թոյլ կենդանիները գիշատիչների դէմ լաւ հովիւներ ու պահապան շներ ունենան»: «Աստուած պահպանէ իմ խրճիթը, աւելացրեց ուխտաւորն, ամենայն տեղ կան շատ գիշատիչ կենդանիներ, և սակաւ բարի հովիւներ: Սուրբ Աստուած, դու գիտես, թէ ինչու այսպէս է, մենք պէտք

է լռենք: Նրա ընկերները կրկնեցին. «այդ, մենք պէտք է լռենք...» և ապա աղօթեցին սուրբ մայր Աստուծուն. «խնդրիր մեզ համար այժմ և մեր մեռնելու ժամանակ, ամեն»:

Մենք բոլորս զթաշարժուցիւնք, երբ ուխտաւորներն այսպէս աղօթում էին. թէ և այլ դէպքում յայտնի է, որ «սուրբ մայր Աստուածածին, խնդրիր մեզ համար» խօսքերն մեզ յեղափոխուններին վրայ շատ չէ ազդում, սակայն այժմ մենք սաստիկ ներքուստ յուզուել էինք:

Տանուտէր: Հաւատում եմ:

Նիքէյ: Ես զարմանում եմ, որ դու հաւատում ես:

Տանուտէր: Ինչո՞ւ չէ. մի ներքին ոչխարային զրթասրտութիւն պէտք է հարկաւ նոյնպէս ոչխարազուխներին և ոչխարասրտերին խիստ յուզէ: Սակայն այս սրտազին ոչխարային կարծիքով պէտք է դայլերը, աղուէսներն ու բոլոր այդպիսի կենդանիները քաղցից սատակէին:

Նիքէյ: Եւ այդ ֆնաս ևս չէր լինի:

Տանուտէր: Գիտե՞ս դու այդ ձիշտ:

Նիքէյ: Ոչ — ես մի խելար եմ — նրանք չպէտք է սովից սատակէին, նրանք դեռ ևս հոտած դիակներ և վայրենի կենդանիներ կը գտնեն, և այդ է նրանց բաժինը և ոչ ընտանի կենդանին, հոգացողութեամբ և ծախսերով պէտք է կրթուի և պահպանուի:

Տանուտէր: Այդպիսով դու ևս չե՞ս թողնում նրանց բոլորովին սովից սատակելու: Այդ արդէն շատ է ընտանի կենդանիների մի բարեկամի համար, սակայն ես միտում եմ, ե՛կ սենեակ:

Նիքէյ: Զեմ կարող, ես պէտք է գնամ:

Տանուտէր: Ուրեմն տէր ընդ ձեզ դրացինե՛ր, ցըտեսութիւն: Նա ներս է մտնում. Ռուբէլն և Նիքէյը մնում են մի վայրկեան կանգնած, և Ռուբէլն ասում է Նիքէյին. դու նրան թթու քսնե՛ր ուտացրիր:

Նիքէլ: Ես կ'ցանկայի, որ բացի զրանից և պղպեղած լինէր, որպէս զի մինչև վաղն առաւօտ նրա լեզուն պրէր:

Ռուբէլ: Ութ օրից առաջ պղպէս չէիր խօսի նրա հետ:

Նիքէլ: Եւ նա ութ օրից առաջ պղպէս չէր պատասխանի:

Ռուբէլ: Այդ ևս ճշմարիտ է: Նա խաղացել է, ինչպէս իմ շունը, երբ առաջին անգամ նա դնէկալ կրեց:

Նիքէլ: Երբ ամանը լիքն է լինում, թափւում է ամփերից. այս միշտ և իւրաքանչիւրի համար ճշարիտ է եղել և տան տէրի համար էլ կ'լինի:

Ռուբէլ: Աստուած աղատէ պաշտօններէից: Ես չէի կամենալ տանուտէր լինել. նոյն իսկ եթէ նրա երկու ազարակներն ինձ տային:

Նիքէլ: Սակայն եթէ քեզ միայն կէսն առաջարկէին, և տանուտէրի պաշտօնը զրա հետ 'ի միասին, ի՞նչ կանէիր:

Ռուբէլ: Խելար դու:

Նիքէլ: Դու խելացի, ի՞նչ կանէիր. տեսնում ես զու իսկոյն կը համաձայնէիր, երկու գունանի վերարկուի մէջ կը փաթաթուէիր և տանուտէր կ'լինէիր:

Ռուբէլ: Դու պղպէս ես կարծում:

Նիքէլ: Այո՛, ես պղպէս եմ կարծում:

Ռուբէլ: Մենք ժամանակ ենք կորցնում վայրահալութեամբ, մնաս բարեւ, Նիքէլ:

Նիքէլ: Մնաս բարեւ, Ռուբէլ:

VII.

ՆԱ. ՍԿՍՈՒՄ Է ՏԱՆՈՒՏԻՐՈՋ ՅԱՏՈՒԿ ՄԻ ԳՈՐԾ.

Երբ այժմ տանուտէրը սափրիչի սենեակը մտաւ, նստելուց առաջ բարեկց սափրիչին, նրա կնոջն և զրացիներին, առանց հաղալու: Ուրիշ ժամանակ նա միշտ առաջ հագում էր և արգէն նստելուց և թքելուց յետոյ էր արտասանում իր «բարեւ ձեզ»:

Գիւղացիները պատասխանեցին ծիծաղով և զրխարկներն առաւել արագ ծածկեցին իրենց գլուխներին, քան այլ անգամ, երբ տանուտէրը նրանց բարեւում էր: Իսկ նա սկսեց շուտով խօսակցութիւնը. միշտ լաւ եկամուտ ունես, վարպետ սափրիչ, և այնչափ դործ ունես, որ զարմանում եմ, թէ ինչպէս այս բոլորը դու կարողանում ես միայնակ երկու ձեռքով անել: Սափրիչն ընդհանրապէս մի խաղաղ մարդ էր և այսպիսի խօսքերին սիրով չէր պատասխանում. սակայն տանուտէրը մի քանի ամիս շարունակ իւրաքանչիւր անգամ կիրակի առաւօտ քարոզի միջոցին այսպիսի խայթող խօսքերով բարկացրել էր նրան, և ինչ որ լինէր, այժմ նա ցանկանում էր մի անգամ պատասխանել և ասաց. պարոն տանուտէր, զուք չ'պէտք է զարմանաք, որ մարդ կարող է երկու ձեռքով ոչինչ չ'լինել, սակայն շատ փող վաստակել:

Տանուտէր: Այո՛, այդ ճշմարիտ է, սափրիչ: Դու պէտք է այդ նոյնպէս փորձէիր, արուեստը այդ է. պէտք է ձեռքերը մի որոշ դիրքով և եղանակով միմեանց վերայ դնել, ինչպէս հարկն է, այն ժամանակ կտուրից ոսկի կ'անձրեւէ:

Սափրիչն առաւել համարձակութիւն ստացաւ և ասաց. ո՛չ, պղպէս չէ, տանուտէր, այլ փաթաթում եմ

երկզունանի վերարկուի տակ և ասում հետեւեալ երեք խօսքերը. այդ այդպէս է. ես երգվում եմ, այս այսպէս է. և յաջող դէպքում բարձրացնում են Յ մատը դէպի վեր և երկուսը դէպի ցած — ա բ բ ա կ ա դ ա բ բ ա¹⁾ և քսակները լցւում են փողով:

Այս բանը կատաղեցրեց տանուտէրին, որ և պատասխանեց. դու կարող էիր կախարդել, ստփրիչ: Սակայն ուրիշ տեսակ չի կարելի, քո զործի տէր մարդիկ անհրաժեշտ է, որ կախարդանք և սատանայական արուեստ հասկանան:

Այս արդէն բաւական էր բարի ստփրիչին. նա շատ զղջաց, որ տանուտէրի հետ բանակուի սկսեց և լռեց, թող տալով ուրիշներին խօսելու և խորին հանդարտութեամբ սապնեց իւր առաջ նստած մարդու երեսը:

Բայց տանուտէրը շարունակելով ասաց. ստփրիչը կատարեալ պարոն է, նա կարող է մեզ պէսներին չպատասխանել: Չէ՞ որ նա կրում է նեղ վարտիկ, քաղաքացու կօշիկներ և կիրակի օրերն բազմաններ, նա ազայի նման քնքոյշ ձեռքեր ունի և քաղաքացի զրազրի սրբունդներ:

Գիւղացիները սիրում էին ստփրիչին, այս ևս արդէն լսել էին և չծիծաղեցին տանուտէրի կատակի վրայ: Միայն երիտասարդ Գալլին, որ հէնց նստել էր սանտրուելու, չկարողացաւ քաղաքացի զրազրի սրունքների վերայ իր ծիծաղը բռնել, որովհետեւ նա հէնց նոր էր եկել կանցելարիայից, ուր նոյնպէս հասել էր սրունքների կատակը: Սակայն ստփրիչը կտրեց նրա վերին շրթուները: Այս բանը ահաճութիւն պատճառեց գիւղացիներին, այնպէս որ

¹⁾ Արրակադարրա մի բառ է առանց մտքի, որի մասին աւանդումները ասում է, որ դա հիւանդութեան և դժբաղդութեան ժամանակ իրաջքներ է անում, երբ այդ բառը շրջած կոնուսի ձեռով մի թղթի կտորի վրայ գրենք և մեզ մօտ պահենք:

բոլորն էլ զլուսները շարժեցին և պառաւ Ուլին բերանից հանեց ծխամորձն և ասաց. տանուտէր, լաւ չէ, որ դու ստփրիչին այդպիսի անհանգստութիւն ես պատճառում: Միւսները տեսնելով, որ ծեր Ուլին չքաշուեց և բաց ձայնով ասաց այդ իրանք էլ մոմուացին բարձրաձայն և ասացին. Գալլի շրթուներէ արիւն է հոսում, մենք չենք կարող այս զրութեան մէջ ստփրիչ տալ:

Ցաւում եմ, առանց տանուտէրը ես կամենում եմ փնտրել նորից ուղղիւ. աղա՛, գնա՛ երեք շնչ լաւ զինի բեր, նա բժշկում է վերքերն առանց տաքացնելու կաւորութեան:

Հէնց որ տանուտէրը սկսեց զինուց խօսել, գիւղացւոց մոմուոցն անյայտացաւ: Մի քանիսը թէեւ չէին հաւատում, որ այդ առանց կատակի է, բայց Լէնքը, որ նստած էր մի անկիւնում, բացատրեց հանելուկն և ասաց. տանուտէրի զինին երեկ գերեզմանատանն այդպէս կորցրեց իր զինը:

Տանուտէրն այժմ վերցրեց իւր ծխախոտով լն քրտակն և դրեց սեղանի վրայ և Գրիստէն, փողոցային երգիչը, առաջին անգամ պահանջեց մի ծխամորձի ծխախոտ: Նա տուեց այդ շուտով եկան շատերն և սենեակը լցուեց այդ հոտած ծխախոտի ծխով: Բայց տանուտէրը ծխում էր լաւ տեսակից: Այդ միջոցին ստփրիչն ու զրացիները դեռ ևս լռու էին, աղմուկ չէին հանում: Վարպետ Ուտիաւին այդ լաւ չ'թուաց, նա բարձր ու ցածր էր սենեակումը և ցուցամատը քթի վերայ պաշտօնում, ինչպէս որ միշտ անում էր նա, երբ նրա ծուռն չէր ուղղւում: Սենեակում սատանայական ցրտութիւն է տիրում, այսպիսի ցրտում ես ոչինչ չեմ կարող անել, ասաց նա ինքն իրեն, յետոյ դռնից դուրս գնաց, աղանին մի պատուէր տուեց, որ աւելի լաւ տաքացնէ, և շուտով սենեակը տաքացաւ:

VIII.

Եթէ ԱՆԻԻՆԵՐՆ ԻԻՂԵՆ, ԿՍՌԻՔԸ Կ'ԵՐԹԱՅ.

Այդ միջոցին բերին և ծծմբախառն զինին. բաժակներ բեր, վարպետ սափրիչ, կոչում է տանուտէրը, և կինն ու մանուկները շուտով բերում են բաւականաչափ բաժակներ: Դրացիներն ամենքն էլ մօտենում են զինուղակներին և տանուտէրը լցնում է բաժակները: Այժմ թէ ծեր Ուլին և թէ միւս բոլոր զրացիները գոհ են և երիտասարդ Գալլե վերքի մասին հօ խօսել անգամ չ'արժէ: Եթէ յիմարը միայն հանդիստ նստէր, ասում էին այժմ նրանք, սափրիչը չէր կտրի նրա շրթուները: Հետզհետէ բացում է այժմ բոլորի ութներն և բարձրանում արբեցողների ազատութիւնը: Ամենքը դովաբանում են դարձեալ տանուտէրին և որմնադիր Լինհարզն այժմ առաջին սեղանի վրայ կոչւում է անպիտան, իսկ երկրորդ սեղանի վրայ՝ մուրացկան. մէկը պատմում է, թէ ինչպէս նա ամեն օր կատարելապէս կոնծում էր, իսկ այժմ սուրբ է ձևանում, միւսը պատմում է, որ ինքը նկատում է, թէ ինչո՞ւ զեղեցիկ Գերտուլը և ոչ ինքն որմնադիրն է զընացել ամբողջ երիտասարդ պարոնի մօտ, և մի երրորդը՝ թէ ինչպէս ինքը զիշերն երազում տեսաւ, որ տանուտէրը շուտով որմնադրի քիթն ըստ արժանւոյն կ'տրորէ: Ինչպէս մի զգուշի թուռն իւր կտուցը խռում է հոտած ջրի մէջ և փթող աղբից կերակրւում է, այնպէս և հուլին ամբողջ էր իւր չար սիրտը դրացիների խօսակցութիւններից: Բայց ինքը շատ լուրջ և մտածելով էր խառնում այս արբեցողների և դատարկախօսների աղմուկի մէջ. զրացի Ռիխտէր, ասաց նա, և առաջարկեց նրան մի բաժակ, դուք անձամբ ներկայ էիք վերջին հա-

շուն և մի այլ երգուեստ անձն: Դուք գիտէք, որ այն ժամանակ որմնադիրը գուլգէն պարտ մնաց ինձ. այժմ ահա կէս տարի է, և նա դեռ ևս մի զրօշ անգամ չէ վճարել: Ես մինչև անգամ այդ փողը նրանից չեմ պահանջել և ոչ մի վատ խօսք ասել նրան. բայց կարող է պատահել, որ ես կորցնեմ իմ փողը մինչև իսկ վերջին կոպէկը:

Այդ հասկանալի է, երգուցին գիւղացիները, դու այլ ևս ոչ մի զրօշ չես տեսնի քո փողից և բաժակները լցրին: Սակայն տանուտէրը հանեց իւր գրպանի օրացուցի միջից որմնադրի ձեռագիրը, դրեց սեղանի վրայ և ասաց. ահա, կարող էք տեսնել, թէ արդեօք ճշմարիտ է:

Գիւղացիները անաղեցին ձեռագիրը, կարծես թէ կարդալ իմանային, և ասացին, որմնադիրը խաբեբայ է: Եւ Քրիստէն, փողոցային երգիչը, որ յայժմ լուռ բաւականի կոնծել էր, սրբում է թեքերով իւր ութը, կանդնում, բարձրացնում է բաժակը և կոչում. կեցցէ՛ տանուտէրը և բոլոր շողորթները պէտք է սատկեն: Այսպէս աղաղակում է բաժակը դատարկում, նորից ապրիս լցնողին, նորից դատարկում և երգում: Այլոց համար փոս փորողը, այլոց ուրդայթ լարողը, թէև լինի չար սատանայ և բարձր զիրքի արժանանայ, դարձեալ կ'ընկնի, ինչպէս կ'ասեն, վերջ ի վերջոյ աղբի միջին. արա՛, որմնադիր, արա՛:

IX.

ԵՐԿՐԻ ԻՐԱԻՈՒՆՔՆԵՐԻՑ.

Այդպէս մի՛ աղաղակի, Քրիստէն, այ տանուտէրը, անօգուտ է այդ: Ես շատ կ'ցաւի, եթէ որմնադիրն մի

դժբաղդութիւն պատահէր: Ես նրան սիրով ներում եմ, նա այդ արեց աղքատութիւնից ստիպուած. բայց վատն այն է, որ օրէնքներն այլ ևս ապահով չեն մեր երկրում:

Դրացիներն անշարժ լսում էին, երբ նա երկրի օրէնքներին էր խօսում. մի քանիսը մինչև անգամ բաժակներն մի կողմը դրին, երբ երկրի օրէնքների մասին լսեցին և ականջ էին դնում:

Ես տարիքով մարդ եմ, դրացիներ, և ինձ համար այդ մեծ նշանակութիւն չունի, ես չունիմ զաւակներ և իմ բանս էլ վերջացած է: Բայց ունիք զաւակներ, զուգիւններ, ձեզ համար ձեր իրաւունքները մեծ նշանակութիւն պէտք է ունենան:

Այո, մեր իրաւունքները, կոչեցին զիւղացիները: Դուք մեր տանուտէրն էք, մի մաղի չափ միք զիջանիլ մեր իրաւունքներից:

Տանուտէր: Այո, դրացիներ, պանդոկապետի իրաւունքները համայնքին են պատկանում և այդ թանկագին իրաւունքը, պանդոկապետի իրաւունքի համար, մենք պէտք է մեզ պաշտպանենք:

Գիւղացիներից մի քանիսը շարժեցին գլուխները, և ասացին կամաց միմեանց ականջում. նա երբէք համայնքին ոչինչ չէ հարցրել, և այժմ ցանկանում է համայնքին ևս այն աղբի մէջ խրել, որի մէջ որ ինքը խրուած է: Բայց մեծամասնութիւնը աղաղակում էր աւելի սաստիկ, երգում և անիծում, որ երբորդ օրը համայնքի ժողով լինի: Հասկացողները լսում էին և մերն բոլորովին կամաց իւրեանց մէջ ասում. այդ կը տեսնենք այն ժամանակ, երբ զինին ձեր գլխներից դուրս գնաց:

Այս միջոց տանուտէրը զգուշութեամբ միշտ իւր եռալորած ջրից էր խմում և շարունակում էր տաքացած զրացիներին իրենց երկրի իրաւունքների մասին հօգսեր պատճառել: Դուք բոլորդ գիտէք, ասաց նա, թէ մեր

նախահայր Ռեպլին 200 տարի առաջ ինչպիսի կռիւներ ունէր այժմեան կալուածատիրոջ նախահօր հետ: Այս ծեր Ռեպլի,¹⁾ իմ պապը հազար անգամ պատմել է ինձ այդ, ամենասիրելի առածն էր. «Երբ աղաները զիւղի մուրացիկներին լաւ ասէն, այն ժամանակ Աստուած ազատի զիւղացիներին»: Նրան անում են այդ, որ զիւղացիներին մէջ հրկաւորակութիւն ձգեն և իրենք միայն իշխեն: Դրացիներ, մենք պէտք է միշտ խաղի մէջ յիմարի դերը կատարենք:

Գիւղացիք: Դրանից ճիշտ բան չկայ, մենք պէտք է միշտ յիմարներ լինենք խաղի մէջ:

Տանուտէր: Այո, դրացիներ, երբ ձեր դատաւորներն այլ ևս նշանակութիւն չունին, այն ժամանակ դուք այն զինուորների վիճակումն էք, որոնք զուրկ են օգնութիւնից: Նոր կալուածատէրը խորամանկ է ինչպէս մի սատանայ: Այդ ոչ ոք չէ տեսնում և հարկաւ առանց պատճառի նա ոչ ոքին մի բարի խօսք չէ ասում: Եթէ դուք միայն իմ գիտեցածի կէսն իմանայիք, այն ժամանակ ևս կարիք չի ունենալ խօսելու, բայց դուք էլ յիմարազուլներ չէք, մի բան կը նկատէք և կը զգուշանաք:

Էրին, որի հետ տանուտէրն առաջուց պայմանաւորուել էր և այժմ նշանացի արել, պատասխանեց նրան. դու կարծում ես, տանուտէր, որ մենք այդ չենք նկատում, նա կամենում է պանդոկապետի իրաւունքը զրաւել:

1) Ռեպլին Բոննալ պատուարժան նախահայրերից մէկն էր և Արնհայմի մի ծեր ժառանգի դէմ հաւատարմութեամբ պաշտպանել էր իւր համայնքը և իւր ունեցած ջուրեցածր կորցրել, որպէս զի գիւղն աղալի համար առանձնապէս չ'ծառայէ: Սակայն այս առածն, որ Հուսմէլը նրա բերանն է դնում, ոչ ոք էլ չ'գիտէ ծշտութեամբ, թէ արդեօք նա իւր ամբողջ կեանքում մի անգամ ասած ինէր:

Տանուտէր: Այդ նկատում էք դուք:

Գիւղացիք: Այո, Աստուած վկայ, բայց չենք կարող թոյլ տալ այդ: Մեր զաւակները պէտք է մի պանդոկ ունենան, որ այնպէս ազատ լինի, ինչպէս այժմ:

Էբի: Ամրոցում նա կարող է մի չափ գինին մի դուկատով ծախել մեզ վրայ, և մենք խաբեբաներ կը լինէինք մեր զաւակների համար:

Տանուտէր: Այդ էլ չափազանցութիւն է, Էբի, մի չափ գինին նա չի կարող մի դուկատի հապնել:

Էբի: Այո, այո, դարբինը և կառաչէն այնպէս են թանգացնում, որ սարսափելի է, և նոյն իսկ փայտը տասն անգամ աւելի թանգ է, քան յիսուն տարի առաջ: Ինչ կարող ես ասել, տանուտէր, քանի որ ամեն ինչ հարկադրած պէտք է լինի, հարկաւ պէտք է թանգանայ: Ի՞նչ կարող ես ասել, զոհաւի կարող է մի չափ գինին արժենալ, եթէ միայն ամրոցում կարելի լինէր գնել այժմ ևս թանգ է:

Տանուտէր: Այդ այդպէս է, այժմ ամեն բանում առաւել ստիպմունք և արգելք կայ, ուստի և ամեն բան թանգանում է:

Այո, այո, երբ մենք այս ամենը տանենք..... ասում էին գիւղացիները, աղաղակում, խմում և սպառնում: Խօսակցութիւնը վերջապէս դարձաւ մի կատաղի անպիտանների վայրենի աղաղակ, որ այլ ևս նկարագրել չեմ կարող:

ՍՍՓՐԻՉԻ ՇՈՒՆՆ ԱՆԺԱՄԱՆԱԿ ԽՄՈՒՄ Է ԶՈՒՐԸ
ԵՒ ՓԶԱՅՆՈՒՄ ՊԱՐՈՆ ՏԱՆՈՒՏԵՐԻ ԽԱՂԸ, ՈՐ
ՇԱՏ ԼԱԻ ԷՐ ԳՆՈՒՄ:

Մեծամասնութիւնն արդէն արբած էր, և Քրիստէնը, փողոցային երգիչը, որ տանուտէրի մօտ էր նստած, ամենից թունդ կերպով: Սա աղաղակեց մի անգամ, ճանապարհ տուէր ինձ: Տանուտէրը և զրացիները վեր կացան և նրան տեղ տուին, բայց նա օրօրուեց սեղանի վերայ և զիպչելով տանուտէրի ջրի ամանին՝ թափեց: Վախեցած տանուտէրը արագութեամբ մաքրեց սեղանի վրայ թափած ջուրը, որպէս զի ոչ ոք չը նկատէ թափուածի ինչ լինելը և նրա խաբեբայութիւնը տեսնէ. սակայն սեղանի տակը թաղ կացած սափրիչի շունը ծարաւ լինելով՝ լակեց թափած ջուրը գետնից, այդ բանը տարաբաղդաբար տեսաւ զրացիներից մէկը, որ ախուր դիտում էր սեղանի տակ թափուած այն լաւ գինին, որ ճկտորը լակում էր, նա կոչեց տանուտէրին. հրաշք և երեւոյթ, տանուտէր, զի ժամանակից են շները գինի խմում:

Յիմար դու, վաղուց արդէն պատասխանեց տանուտէրը, ձեռքով և գլխով նշան արաւ և ոտքով խփեց սեղանի տակից, որպէս զի նա լռէ: Շանը այնպէս մի հարուած տուեց, որ մի այլ տեղ որոնէ իր համար, բայց նա այդ հրամանը չ'հասկացաւ, որովհետեւ պատկանում էր սափրիչին: Նա ձայն հանեց, մրմռաց և սկսեց նորից լակել գետնին թափուած ջուրը: Սակայն տանուտէրը սփռթնեց շան այս լակելու վրայ, որովհետեւ զրացիներից շատերը սկսեցին սեղանի տակը նայել: Շուտով ամեն կողմից սկսեցին քչփչալ և շան վրայ մատնացոյց անել: Սափրիչի կինը մինչև անգամ վերցրեց այժմ գետնից կտորուած ամանի կտորները և մօտեցրեց քթին և տեսնելով, որ

ջրի հոս է փչում, ուժով շարժեց գլուխը և ասաց բարձրաձայն. այս լաւ է:

Հեղաշեռէ գիւղացիները սկսեցին մոմաւ խաւքան- չիւր անկիւնից. դրա տակը մի բան կայ. և սափրիչը ն- սաց. տանուտէր, քո լաւ գինին եռացրած ջուր է: Ճըշ- մարիւտ է, տանուտէր, ինչու ես ջուր խմում:

Շփոթուած տանուտէրը պատասխանեց. ես առողջ չեմ, պէտք է ինձ խնայեմ: Բայց գիւղացիները հաւատ չէին ընծայում այս պատասխանին և հեղաշեռէ աջ ու ձախ սկսեցին մոմաւ. բայց այդ այժմ սկսեցին և մի քանիսը գանդատուել, որ խմած գինին նրանց գլուխը պտտեցնում է, և այդպէս չ'պէտք է լինէր այդչափ քիչ գինուց: Երկու պատուելիներն, որ այնտեղ էին, վեր կա- ցան, վճարեցին սափրիչին, տէր ընդ ձեզ, դրացիներ, ա- սացին և գնացին դուրս:

Այդպէս միանգամից, պարոններ, ինչու այդպէս մի- անգամից հեռանում էք ընկերութիւնից, վաղեց նրանց ետեկից տանուտէրը:

Մենք ուրիշ գործ ունինք, պատասխանեցին այդ մարդիկը և գնացին դուրս: Սափրիչն ընկերակիցեց նրանց սենեակից դուրս և ասաց. ես աւելի սիրով կ'ցանկայի, որ տանուտէրը դուրս եկած լինէր. ոչ մի բանում նա ան- կեղծ չէ, թէ գինու և թէ ջրի վերաբերմամբ:

Մենք էլ չենք հաւատում, եթէ ոչ այնտեղ նստած կը մնայինք, պատասխանեցին այդ մարդիկը:

Սափրիչ: Եւ այս հարկեցողների աղմուկն աս- նել չեմ կարող:

Այդ մարդիկը: Թէեւ դու ոչինչ պատճառ չու- նիս, սակայն կարող ես խաթի մէջ ընկնել: Եթէ ես քո տեղը լինէի, աւելացրեց այդ երկուսից աւագը, ես ինքս կը վերջացնէի բանը:

Ես չեմ համարձակուի պատասխանեց սափրիչը:

Այժմ այլ ևս հին ժամանակը չէ, և դու քո սեն- եակում հօ գեռ ևս տէր ես, ասացին այդ մարդիկը:

Ես կամենում եմ հետեւել ձեզ, ասաց սափրիչը և կրկին դարձաւ իւր սենեակը:

Այս մարդոց ինչն է ցաւում, որ այսպէս յան- կարծակի վեր կացան և գնացին, հարցրեց տանուտէրը:

Սափրիչը պատասխանեց. ես ևս այնպէս եմ: Ինչպէս նրանք. այսպիսի մի զայմազալ պատշաճ չէ. և իմ տունս բոլորովին դրա տեղը չէ:

Տառնուտէր: Ահա, այս էլ մի կարծիք է:

Սափրիչ: Այո. դրան, տանուտէր, ճշմարիտ, որ սիրում եմ մի խաղաղ սենեակ:

Սակայն այս բանակոխը հաճոյ չ'թուեցաւ պատուոյ հիւրերին: Մենք աւելի հանդիստ կը մնանք, ասաց մէկը. մենք արքարացի կը վարուենք, ասաց մի ուրիշը. միշտ լաւ բարեկամ լինելը լաւ է, ասաց մի երրորդը. տանու- տէր, զարձեալ մի աման, ասաց Քրիստէնը:

Այո, դրացիներ, ես ևս մի սենեակ ունիմ, մենք կարող ենք պարոն սափրիչին հանդիստ թողնել, ասաց տանուտէրը:

Այդ ինձ համար շատ լաւ կը լինի, պատասխանեց սափրիչը:

Սակայն համայնքի իրաւունքը մոռացուեց և նոյնպէս պանդոկապիտներ, դրացիներ, ասաց ծարու աւագ էրին:

Թող ինձ հետեւէ, ով որ կեղծ չէ, կոչեց սպառ- նալով տանուտէրը, հայհոյեց, նայեց վայրենի կերպով իւր շուրջը, ոչ ոքի միաս բարեւ չ'ասաց և դուռն այնպէս փա- կեց իւր ետեկից, որ սենեակը դողդողաց:

Այս անամօթութիւն է, ասացին գիւղացիներէից շա- տերը: Այո, արդարացի չէ, ասաց երիտասարդ Մայերն, ես այլ ևս չեմ գնալ տանուտէրի տունը: Ես ևս ոչ, պատասխանեց Լեօպոլին: Ոչ, ստատանոյ, ես ևս ոչ. ես յի- շում եմ երեկուայ առաւօտը, ասաց Ռէնօլդին: Ես ամե-

նից մօտիկ էի կանգնած Արնեւին և նրա մօտ և լաւ տեսայ, թէ ի՞նչ կը նշանակէր այդ: Իրացիները միմեանց էին նայում: Թէ ի՞նչ անեն, սակայն մեծամասնութիւնը կրկին նստեց և մնաց: Միայն էբին և Քրիստէնը և մի քանի այլ մուրացկաններ, սեղանի վրայից առան տանուտէրի դատարկ շէշերը և թւերի տակ բռնելով՝ հետեւեցին նորան:

Տանուտէրը իւր պատուհաններից նայելով դէպի այն փողոցը, որ տանում էր սափրիչի տունը և տեսնելով, որ ոչ ոք չէ հետեւում իրեն, ինքը իր վրայ բարկացաւ: Ես մի եղն եմ, մի կաղ եղն. շուտով ճաշ կ'լինի և ես դեռ ևս ոչինչ չեմ արել: Գինին կոնծեցին և այժմ վրաս էլ ծիծաղում են. ես նրանց հետ թոթովեցի ինչպէս մի մանուկ, որ դեռ ևս կաթն է ծծում, և ինձ ստորացրի ինչպէս նրանց հաւասարը: Այո՛, եթէ ես այս շնորի բարին կամենայի, եթէ այն, ինչ որ օգտակար է համայնքի համար, ինձ համար ևս սիրելի և լաւ լինէր, կամ թէ ես վերջն արտաքուստ աւելի այնպէս ցոյց տալի, որ իբր թէ նորանց բարին եմ ցանկանում, այն ժամանակ բանը կը յաջողուէր: Մի այսպիսի համայնք իսկոյն սկսում է պարել մի խելօքի ծափով, եթէ կարծում է, որ նորա բարին են ցանկանում: Սակայն անցած ժամանակները շատ լաւ էր ինձ համար: Ծեր կալըւածատիւրօջ ժամանակ նոյնչափ էին հարցնում համայնքից, որչափ մի իծից: Որչափ ժամանակ որ ես տանուտէր եմ, միշտ իմ զուարճութիւնն և ուրախութիւնս է եղել յիմարացնել զրանց, հայհոյել և ձեռքիս տակ առնել և իսկապէս մտադիր եմ նոյնը շարունակելու, սակայն դրա համար պէտք է, որ նրանց ինձանից երեք քայլ հեռու պահեմ. իւրաքանչիւր ձեռք սեղմելը, զիջողութիւնը, խորհուրդ տալը, «ամեն մարդու աներօրդի» կոչելը այլ ևս ոչինչ չէ օգնում, երբ մէկին լաւ են ճանաչում: Ինչպէս

մէկը պէտք է յուռ և մենակ դործէ, միայն այն մարդոց դործ ածէ, որոնց ճանաչում է և համայնքը թողնել հանդիստ: Հովիւը չէ խորհրդակցում եղևերի հետ, իսկ ես այսօր այնչափ յիմարացայ, որ կամենում էի անել այդ: Այդ միջոցին եկան դատարկ շէշեր բերող մարդիկը: Մենակ է՞ք, հարցրեց տանուտէրը, այն շնորը չ'կամեցան գալ:

Ոչ, ոչ մէկը, պատասխանեց էբին:

Տանուտէր: (Զաղլէւով) Այդ շատ մեծ նշանակութիւն ունի:

Քրիստէն: (Նոյնպէս Զաղլէւով) Այո՛, շատ մեծ, ես նոյնպէս կարծում եմ:

Տանուտէր: Այնու ամենայնիւ ես կը ցանկայի իմանալ, թէ այժմ ի՞նչ են խօսում միմեանց հետ և ի՞նչ խորհրդակցում: Քրիստէն, գնա և այլ շէշեր որոնիր:

Քրիստէն: Աւելի չ'կան այնտեղ:

Տանուտէր: Յիմար դու, այդ միւսնոյն է, գնա միայն և որոնիր: Եթէ ոչինչ չ'գտար, մտադիր խուզել տուր և սպասիր և լսիր այն ամենը, ինչ որ նրանք կը պատմեն: Եթէ շատ բան կը բերես ինձ համար, քեզ հետ մինչև առաւօտ կը կոնծեմ: Եւ դու, Լիօլի, պէտք է գնաս որմնադրի աւազ աշակերտի, Յովսէփի մօտ, սակայն տես, որ ոչ ոք չը նկատէ քեզ: Դու պէտք է նրան ասես, որ ճաշի ժամանակ ինձ մօտ դայ:

Դարձեալ մի բաժակ զինի ճանապարհի վրայ, ծարաւ եմ, ասաց Լիօլի: Այն ժամանակ կը վազեմ, ինչպէս մի որսի շուն և մի ակնթարթում կրկին այստեղ կը լինեմ:

Լաւ, ասաց տանուտէրը և մի մի բաժակ զինի տուր եւ նրանց ճանապարհի վրայ:

Սրանք գնացին և տանուտէի ամուսինը միւս երկուսի առաջ էլ զինի դրեց:

[illegible]

Young & Young,

[Faint handwritten text at the bottom of the page]

[illegible]

1840 1841

[illegible]

The Law of the Republic

2 m 6 n e l m f m d h o u r w i t t e n s c h a p v a n d e

1976, 1977, 1978, 1979, 1980, 1981, 1982, 1983, 1984, 1985, 1986, 1987, 1988, 1989, 1990, 1991, 1992, 1993, 1994, 1995, 1996, 1997, 1998, 1999, 2000, 2001, 2002, 2003, 2004, 2005, 2006, 2007, 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016, 2017, 2018, 2019, 2020, 2021, 2022, 2023, 2024, 2025, 2026, 2027, 2028, 2029, 2030, 2031, 2032, 2033, 2034, 2035, 2036, 2037, 2038, 2039, 2040, 2041, 2042, 2043, 2044, 2045, 2046, 2047, 2048, 2049, 2050, 2051, 2052, 2053, 2054, 2055, 2056, 2057, 2058, 2059, 2060, 2061, 2062, 2063, 2064, 2065, 2066, 2067, 2068, 2069, 2070, 2071, 2072, 2073, 2074, 2075, 2076, 2077, 2078, 2079, 2080, 2081, 2082, 2083, 2084, 2085, 2086, 2087, 2088, 2089, 2090, 2091, 2092, 2093, 2094, 2095, 2096, 2097, 2098, 2099, 2100, 2101, 2102, 2103, 2104, 2105, 2106, 2107, 2108, 2109, 2110, 2111, 2112, 2113, 2114, 2115, 2116, 2117, 2118, 2119, 2120, 2121, 2122, 2123, 2124, 2125, 2126, 2127, 2128, 2129, 2130, 2131, 2132, 2133, 2134, 2135, 2136, 2137, 2138, 2139, 2140, 2141, 2142, 2143, 2144, 2145, 2146, 2147, 2148, 2149, 2150, 2151, 2152, 2153, 2154, 2155, 2156, 2157, 2158, 2159, 2160, 2161, 2162, 2163, 2164, 2165, 2166, 2167, 2168, 2169, 2170, 2171, 2172, 2173, 2174, 2175, 2176, 2177, 2178, 2179, 2180, 2181, 2182, 2183, 2184, 2185, 2186, 2187, 2188, 2189, 2190, 2191, 2192, 2193, 2194, 2195, 2196, 2197, 2198, 2199, 2200, 2201, 2202, 2203, 2204, 2205, 2206, 2207, 2208, 2209, 2210, 2211, 2212, 2213, 2214, 2215, 2216, 2217, 2218, 2219, 2220, 2221, 2222, 2223, 2224, 2225, 2226, 2227, 2228, 2229, 2230, 2231, 2232, 2233, 2234, 2235, 2236, 2237, 2238, 2239, 2240, 2241, 2242, 2243, 2244, 2245, 2246, 2247, 2248, 2249, 2250, 2251, 2252, 2253, 2254, 2255, 2256, 2257, 2258, 2259, 2260, 2261, 2262, 2263, 2264, 2265, 2266, 2267, 2268, 2269, 2270, 2271, 2272, 2273, 2274, 2275, 2276, 2277, 2278, 2279, 2280, 2281, 2282, 2283, 2284, 2285, 2286, 2287, 2288, 2289, 2290, 2291, 2292, 2293, 2294, 2295, 2296, 2297, 2298, 2299, 2300, 2301, 2302, 2303, 2304, 2305, 2306, 2307, 2308, 2309, 2310, 2311, 2312, 2313, 2314, 2315, 2316, 2317, 2318, 2319, 2320, 2321, 2322, 2323, 2324, 2325, 2326, 2327, 2328, 2329, 2330, 2331, 2332, 2333, 2334, 2335, 2336, 2337, 2338, 2339, 2340, 2341, 2342, 2343, 2344, 2345, 2346, 2347, 2348, 2349, 2350, 2351, 2352, 2353, 2354, 2355, 2356, 2357, 2358, 2359, 2360, 2361, 2362, 2363, 2364, 2365, 2366, 2367, 2368, 2369, 2370, 2371, 2372, 2373, 2374, 2375, 2376, 2377, 2378, 2379, 2380, 2381, 2382, 2383, 2384, 2385, 2386, 2387, 2388, 2389, 2390, 2391, 2392, 2393, 2394, 2395, 2396, 2397, 2398, 2399, 2400, 2401, 2402, 2403, 2404, 2405, 2406, 2407, 2408, 2409, 2410, 2411, 2412, 2413, 2414, 2415, 2416, 2417, 2418, 2419, 2420, 2421, 2422, 2423, 2424, 2425, 2426, 2427, 2428, 2429, 2430, 2431, 2432, 2433, 2434, 2435, 2436, 2437, 2438, 2439, 2440, 2441, 2442, 2443, 2444, 2445, 2446, 2447, 2448, 2449, 2450, 2451, 2452, 2453, 2454, 2455, 2456, 2457, 2458, 2459, 2460, 2461, 2462, 2463, 2464, 2465, 2466, 2467, 2468, 2469, 2470, 2471, 2472, 2473, 2474, 2475, 2476, 2477, 2478, 2479, 2480, 2481, 2482, 2483, 2484, 2485, 2486, 2487, 2488, 2489, 2490, 2491, 2492, 2493, 2494, 2495, 2496, 2497, 2498, 2499, 2500, 2501, 2502, 2503, 2504, 2505, 2506, 2507, 2508, 2509, 2510, 2511, 2512, 2513, 2514, 2515, 2516, 2517, 2518, 2519, 2520, 2521, 2522, 2523, 2524, 2525, 2526, 2527, 2528, 2529, 2530, 2531, 2532, 2533, 2534, 2535, 2536, 2537, 2538, 2539, 2540, 2541, 2542, 2543, 2544, 2545, 2546, 2547, 2548, 2549, 2550, 2551, 2552, 2553, 2554, 2555, 2556, 2557, 2558, 2559, 2560, 2561, 2562, 2563, 2564, 2565, 2566, 2567, 2568, 2569, 2570, 2571, 2572, 2573, 2574, 2575, 2576, 2577, 2578, 2579, 2580, 2581, 2582, 2583, 2584, 2585, 2586, 2587, 2588, 2589, 2590, 2591, 2592, 2593, 2594, 2595, 2596, 2597, 2598, 2599, 2600, 2601, 2602, 2603, 2604, 2605, 2606, 2607, 2608, 2609, 2610, 2611, 2612, 2613, 2614, 2615, 2616, 2617, 2618, 2619, 2620, 2621, 2622, 2623, 2624, 2625, 2626, 2627, 2628, 2629, 2630, 2631, 2632, 2633, 2634, 2635, 2636, 2637, 2638, 2639, 2640, 2641, 2642, 2643, 2644, 2645, 2646, 2647, 2648, 2649, 2650, 2651, 2652, 2653, 2654, 2655, 2656, 2657, 26

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԵՂԵՍԻ ԿԱՆԱԿԱՆ ԳԵՂԵՍԻ ԿԱՆԱԿԱՆ ԳԵՂԵՍԻ

ՀԱՅԿԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԿԱԿԱՆ ԿԵՆՏՐԱԼ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԸ

2 m 1 n 1 m 2 : 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45 46 47 48 49 50 51 52 53 54 55 56 57 58 59 60 61 62 63 64 65 66 67 68 69 70 71 72 73 74 75 76 77 78 79 80 81 82 83 84 85 86 87 88 89 90 91 92 93 94 95 96 97 98 99 100 101 102 103 104 105 106 107 108 109 110 111 112 113 114 115 116 117 118 119 120 121 122 123 124 125 126 127 128 129 130 131 132 133 134 135 136 137 138 139 140 141 142 143 144 145 146 147 148 149 150 151 152 153 154 155 156 157 158 159 160 161 162 163 164 165 166 167 168 169 170 171 172 173 174 175 176 177 178 179 180 181 182 183 184 185 186 187 188 189 190 191 192 193 194 195 196 197 198 199 200 201 202 203 204 205 206 207 208 209 210 211 212 213 214 215 216 217 218 219 220 221 222 223 224 225 226 227 228 229 230 231 232 233 234 235 236 237 238 239 240 241 242 243 244 245 246 247 248 249 250 251 252 253 254 255 256 257 258 259 260 261 262 263 264 265 266 267 268 269 270 271 272 273 274 275 276 277 278 279 280 281 282 283 284 285 286 287 288 289 290 291 292 293 294 295 296 297 298 299 300 301 302 303 304 305 306 307 308 309 310 311 312 313 314 315 316 317 318 319 320 321 322 323 324 325 326 327 328 329 330 331 332 333 334 335 336 337 338 339 340 341 342 343 344 345 346 347 348 349 350 351 352 353 354 355 356 357 358 359 360 361 362 363 364 365 366 367 368 369 370 371 372 373 374 375 376 377 378 379 380 381 382 383 384 385 386 387 388 389 390 391 392 393 394 395 396 397 398 399 400 401 402 403 404 405 406 407 408 409 410 411 412 413 414 415 416 417 418 419 420 421 422 423 424 425 426 427 428 429 430 431 432 433 434 435 436 437 438 439 440 441 442 443 444 445 446 447 448 449 450 451 452 453 454 455 456 457 458 459 460 461 462 463 464 465 466 467 468 469 470 471 472 473 474 475 476 477 478 479 480 481 482 483 484 485 486 487 488 489 490 491 492 493 494 495 496 497 498 499 500 501 502 503 504 505 506 507 508 509 510 511 512 513 514 515 516 517 518 519 520 521 522 523 524 525 526 527 528 529 530 531 532 533 534 535 536 537 538 539 540 541 542 543 544 545 546 547 548 549 550 551 552 553 554 555 556 557 558 559 560 561 562 563 564 565 566 567 568 569 570 571 572 573 574 575 576 577 578 579 580 581 582 583 584 585 586 587 588 589 590 591 592 593 594 595 596 597 598 599 600 601 602 603 604 605 606 607 608 609 610 611 612 613 614 615 616 617 618 619 620 621 622 623 624 625 626 627 628 629 630 631 632 633 634 635 636 637 638 639 640 641 642 643 644 645 646 647 648 649 650 651 652 653 654 655 656 657 658 659 660 661 662 663 664 665 666 667 668 669 670 671 672 673 674 675 676 677 678 679 680 681 682 683 684 685 686 687 688 689 690 691 692 693 694 695 696 697 698 699 700 701 702 703 704 705 706 707 708 709 710 711 712 713 714 715 716 717 718 719 720 721 722 723 724 725 726 727 728 729 730 731 732 733 734 735 736 737 738 739 740 741 742 743 744 745 746 747 748 749 750 751 752 753 754 755 756 757 758 759 760 761 762 763 764 765 766 767 768 769 770 771 772 773 774 775 776 777 778 779 780 781 782 783 784 785 786 787 788 789 790 791 792 793 794 795 796 797 798 799 800 801 802 803 804 805 806 807 808 809 810 811 812 813 814 815 816 817 818 819 820 821 822 823 824 825 826 827 828 829 830 831 832 833 834 835 836 837 838 839 840 841 842 843 844 845 846 847 848 849 850 851 852 853 854 855 856 857 858 859 860 861 862 863 864 865 866 867 868 869 870 871 872 873 874 875 876 877 878 879 880 881 882 883 884 885 886 887 888 889 890 891 892 893 894 895 896 897 898 899 900 901 902 903 904 905 906 907 908 909 910 911 912 913 914 915 916 917 918 919 920 921 922 923 924 925 926 927 928 929 930 931 932 933 934 935 936 937 938 939 940 941 942 943 944 945 946 947 948 949 950 951 952 953 954 955 956 957 958 959 960 961 962 963 964 965 966 967 968 969 970 971 972 973 974 975 976 977 978 979 980 981 982 983 984 985 986 987 988 989 990 991 992 993 994 995 996 997 998 999 1000 1001 1002 1003 1004 1005 1006 1007 1008 1009 1010 1011 1012 1013 1014 1015 1016 1017 1018 1019 1020 1021 1022 1023 1024 1025 1026 1027 1028 1029 1030 1031 1032 1033 1034 1035 1036 1037 1038 103

Գրում Ժիրուհի Եղիարյան, գրասենյակից 16/10/2016 թվականին

... ..

1870-1871

100

... ..

1871
 1872
 1873
 1874
 1875
 1876
 1877
 1878
 1879
 1880
 1881
 1882
 1883
 1884
 1885
 1886
 1887
 1888
 1889
 1890
 1891
 1892
 1893
 1894
 1895
 1896
 1897
 1898
 1899
 1900
 1901
 1902
 1903
 1904
 1905
 1906
 1907
 1908
 1909
 1910
 1911
 1912
 1913
 1914
 1915
 1916
 1917
 1918
 1919
 1920
 1921
 1922
 1923
 1924
 1925
 1926
 1927
 1928
 1929
 1930
 1931
 1932
 1933
 1934
 1935
 1936
 1937
 1938
 1939
 1940
 1941
 1942
 1943
 1944
 1945
 1946
 1947
 1948
 1949
 1950
 1951
 1952
 1953
 1954
 1955
 1956
 1957
 1958
 1959
 1960
 1961
 1962
 1963
 1964
 1965
 1966
 1967
 1968
 1969
 1970
 1971
 1972
 1973
 1974
 1975
 1976
 1977
 1978
 1979
 1980
 1981
 1982
 1983
 1984
 1985
 1986
 1987
 1988
 1989
 1990
 1991
 1992
 1993
 1994
 1995
 1996
 1997
 1998
 1999
 2000
 2001
 2002
 2003
 2004
 2005
 2006
 2007
 2008
 2009
 2010
 2011
 2012
 2013
 2014
 2015
 2016
 2017
 2018
 2019
 2020
 2021
 2022
 2023
 2024
 2025
 2026
 2027
 2028
 2029
 2030
 2031
 2032
 2033
 2034
 2035
 2036
 2037
 2038
 2039
 2040
 2041
 2042
 2043
 2044
 2045
 2046
 2047
 2048
 2049
 2050
 2051
 2052
 2053
 2054
 2055
 2056
 2057
 2058
 2059
 2060
 2061
 2062
 2063
 2064
 2065
 2066
 2067
 2068
 2069
 2070
 2071
 2072
 2073
 2074
 2075
 2076
 2077
 2078
 2079
 2080
 2081
 2082
 2083
 2084
 2085
 2086
 2087
 2088
 2089
 2090
 2091
 2092
 2093
 2094
 2095
 2096
 2097
 2098
 2099
 2100
 2101
 2102
 2103
 2104
 2105
 2106
 2107
 2108
 2109
 2110
 2111
 2112
 2113
 2114
 2115
 2116
 2117
 2118
 2119
 2120
 2121
 2122
 2123
 2124
 2125
 2126
 2127
 2128
 2129
 2130
 2131
 2132
 2133
 2134
 2135
 2136
 2137
 2138
 2139
 2140
 2141
 2142
 2143
 2144
 2145
 2146
 2147
 2148
 2149
 2150
 2151
 2152
 2153
 2154
 2155
 2156
 2157
 2158
 2159
 2160
 2161
 2162
 2163
 2164
 2165
 2166
 2167
 2168
 2169
 2170
 2171
 2172
 2173
 2174
 2175
 2176
 2177
 2178
 2179
 2180
 2181
 2182
 2183
 2184
 2185
 2186
 2187
 2188
 2189
 2190
 2191
 2192
 2193
 2194
 2195
 2196
 2197
 2198
 2199
 2200
 2201
 2202
 2203
 2204
 2205
 2206
 2207
 2208
 2209
 2210
 2211
 2212
 2213
 2214
 2215
 2216
 2217
 2218
 2219
 2220
 2221
 2222
 2223
 2224
 2225
 2226
 2227
 2228
 2229
 2230
 2231
 2232
 2233
 2234
 2235
 2236
 2237
 2238
 2239
 2240
 2241
 2242
 2243
 2244
 2245
 2246
 2247
 2248
 2249
 2250
 2251
 2252
 2253
 2254
 2255
 2256
 2257
 2258
 2259
 2260
 2261
 2262
 2263
 2264
 2265
 2266
 2267
 2268
 2269
 2270
 2271
 2272
 2273
 2274
 2275
 2276
 2277
 2278
 2279
 2280
 2281
 2282
 2283
 2284
 2285
 2286
 2287
 2288
 2289
 2290
 2291
 2292
 2293
 2294
 2295
 2296
 2297
 2298
 2299
 2300
 2301
 2302
 2303
 2304
 2305
 2306
 2307
 2308
 2309
 2310
 2311
 2312
 2313
 2314
 2315
 2316
 2317
 2318
 2319
 2320
 2321
 2322
 2323
 2324
 2325

... ..

[Faint, illegible handwritten text at the bottom of the page]

764

ՀԱՅԿ ԺԳԵՐՈՒՄԻՆ ԳՆԱՅԻՄ ԿԸ :

ԳԼՈՒԽ ԳՐԻԳՈՐԻԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՆ ԵՆԻՐՈՒՄԻ ԵՎ ԵՐԿՐՈՒՄԻ ԳՐԱՆԳՈՐԾ

გეძევი ქაძევი / 15 ზოთა ქაძევი

1501

2013

